

Նախիջևանն ըստ Մ. Նահանգների Պետքարտուղարության և Հայաստանի Ազգային արխիվի փաստաթղթերի (1918-1920)

Նախիջևանը հին և միջին դարերին:

Նախիջևանի գավառը հին և միջին դարերում Վասպուրական նահանգի մի մասն էր: Ամբողջ Վասպուրականը զբաղեցնում էր 40.870 քառ. կմ. տարածք՝ ձգվելով Վանա լիճի ավազանում գտնվող Ռշտունիքից մինչև նահանգի արևելյան ծայրամասում տեղակայված Գողթնն ու Նախիջևանը: Վերջինի վերաբերյալ տեղեկություններ կան պատմահոր Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, այլ պատմիչների մոտ, ինչպես և «Աշխարհացոյց»ի թերթերում¹:

Վասպուրականի ականավոր քաղաքներից էր Նախիջևանի կենտրոն հանդիսացող Ջուղան, որը 1918-1920թթ. հիշատակվում էր Ջուլֆա անվանումով: Այն կառուցվել է Արաքսի ծախ ափին և նույնպես հիշատակվել է Խորենացու մատյանում: Անտիկ ժամանակից արհեստների կենտրոն համարվող Ջուղան արդեն XV-XVI դարերում հռչակվում է որպես առևտրական խոշոր հանգույց: Այնտեղ ապրանքափոխանակությունը ընդգրկում էր Թուրքիան, Պարսկաստանը, Ռուսաստանը, հասնում էր Վիեննա, Վենետիկ, Ամստերդամ, ընդհուպ Եգիպտոսի, Հնդկաստանի, Չինաստանի սահմաններ²: Այդ ժամանակ Ջուղան ուներ 40.000 բնակիչ, նրա արևելյան ու արևմտյան կողմերը շրջապատված էին պարիսպով, իսկ քաղաքի աջափնյա թաղը միջնամասին էր կապված հսկա մի կամրջով: Քաղաքը գեղեցկացնում էին յոթ եկեղեցի, կոկիկ ու զարդարված տներ, քարվանսարաններ, հյուրանոցներ ու փակ շուկա: Հայկական հին գերեզմանոցը՝ հարավային կողմում, ուշագրավ էր իր 10.000 հայտնի խաչքարերով (X-XVII դարեր):

XIV-XV դարերում Լանկ-Թամուրի և թուրքմենների ավերիչ արշավանքների, հետագա թուրք-իրանական պատերազմների հետևանքներով տեղի ունեցավ ջուղայեցիների զանգվածային // -207 արտագաղթը: Քաղաքի և ամբողջ Նախիջևանի համար ամենասարսափելին 1604 թվականն էր, երբ շահ Աբբաս I-ի հրամանը ի կատար ածելով՝ Ջուղան այրվեց ու հիմնահատակ արվեց: Նրա բոլոր բնակիչներին՝

¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Աշխատ.Մ.Աբեղեան, Ս.Հարութիւնեան, Երևան, ՀԽՍՀ ԳԱ, 1991, էջ 83, 112, 180, 296; Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմութիւն, Թարգմ. Ս.Մալխասյանց, Երևան, ԵՊՀ, 1987, էջ 267: Տե՛ս նաև Ա.Տ.Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»ի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, 1963, էջ 72, 109-110; Է.Լ.Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցի (VI-VII դդ.), Երևան, Անկյունաքար, 2000, էջ 37; Ա.Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, Երևան, ԵՊՀ, 2007, էջ 111, 124:

² Մովսես Խորենացի, նշվ.աշխ., էջ 83; Араке́л Давруже́ц, Книга исто́рии, Пер.Л.А.Ханларя́н, М., Наука, 1973, с.52-53, 55, 73-78, 401; Յ.Քիրտեան, Ջուղայեցի Խօջայ Նազար եւ Իւր Գերդաստանը, Պոսքըն, Հայրենիք, 1943; Մ.Ա.Ավետիսյան, Նախիջևանի պատմության վավերագրեր (1889-1920թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1996, № 3, էջ 186; Ա.Ա.Այվազյան, Նախիջևան, Երևան, Հուշարձան, 1995, էջ 124, 127:

ընդհանուր 300.000 հայրենակիցների թվում, անհամար կորուստների գնով բռնի քշել են Իրան: Հետայսու նրանք պետք է զարգացնեին այդ երկրի առևտուրն ու հզորացնեին դրա տնտեսությունը: Աքսորյալներից 20.000 բնակեցվեցին Սպահանում, որտեղ հիմնեցին իրենց թաղամասն ու կոչեցին Նոր Ջուղա: 1667թ. մայիսի 31-ին Նոր Ջուղայի խոջաները առաջինն էին Ռուսաստանի պատմության մեջ, որոնք պայմանագիր կապեցին ցարական արքունիքի հետ Սպահանի Հայ առևտրական ընկերության գործունեության մասին: Նրա 40-հոգանոց խումբը՝ 5 տոկոսի վճարման դիմաց, Եվրոպայի և Ասիայի միջև՝ Աստրախանից Արխանգելսկ իրականացվող տարանցիկ առևտրի արտոնություն ստացավ:

Ավելի ուշ՝ XIX դարի վերջին 500 հոգի կարողացավ վերադառնալ ու վերաբնակվել հայրենիքում: Հին Ջուղայի ավերակները պահպանվում էին 1919թ. առկա Ջուլֆայից քիչ դեպի արևմուտք, իսկ Ջուլֆան, գտնվելով գավառի կենտրոնից հյուսիս-արևելք՝ 30 կմ հեռավորության վրա, խճուղու և երկաթուղային կարևոր հանգույց էր:

1989թ. դեկտեմբերին, 1998ին, 2002ին և 2005թ. դեկտեմբերի 10-14-ին արդի Ադրբեջանի ջարդարարները՝ իրենց կառավարության կարգադրությամբ, բանակն ու հրետանին կիրառելով, բուլդոզերներով քանդեցին ՅՈՒՆԵՍԿՕ-ի հաշվառման ենթարկված համալիրն՝ X-XVII դդ. կերտած վերջին 3.700 խաչքարերը³: Նրանք ձգտում էին ի սպառ ջնջել հայկական քաղաքակրթության վկայությունները Նախիջևանում:

Գավառի վարչական պատկանելիությունը:

Գավառը՝ որպես նոր պատմության ժամանակի ազգային-վարչական միավոր, Ռուսաստանին է միացվել 1828թ. Թուրքմենչայի պայմանագրով: Երևանի խանությունն ու Նախիջևանի խանությունը միասին (երկուսն էլ հաստատվել են 1747թ.) 1828թ. մարտի 21-ից ձևավորել էին Հայկական մարզը: Մարզի կազմալուծվելուց հետո Նախիջևանն ու Երևանը 1840թ. ապրիլի 10-ից դարձան Վրացա-իմերեթական նահանգի, իսկ 1846թ. // -208 դեկտեմբերի 14-ից՝ Թիֆլիսի նահանգի մի մաս: Ռուսաստանի իշխանությունը Նախիջևանը երբեք չստորադրեց Կասպիական մարզին, Շամախու, իսկ ավելի ուշ՝ Բաքվի կամ Ելիսավետպոլի նահանգներին: Պահպանելով ազգագրական պատկերը՝ 1849թ. հունիսի 9-ին Երևանի նահանգի ձևավորմանը ընդգրկվեց ամբողջ Հայկական մարզը, այն է՝ Երևանը, Նախիջևանն ու Ալեքսանդրապոլի գավառի հիմնական մասը: 1867թ. դեկտեմբերի 9-ին՝ հերթական վարչական փոփոխությունների ժամանակ, Նախիջևանի գավառը Շարուր-Ղարալագյազի (Վայոց ձորի) հետ միասին մնաց Երևանի նահանգում, որը Անդրկովկասի ամենախոշոր միավորներից մեկն էր: Ներքին սահ-

³ Թ.Խ.Հակոբյան, Ս.Ս.Մելիք-Բախշյան, Հ.Խ.Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ.4, Երևան, ԵՊՀ, 1998, էջ 427; The Annihilation of the Armenian Cemetery in Jugha, RAA Research on Armenian Architecture, Beirut, Photogravure, Lebanon, 2006:

մանների՝ 1874թ. ձեռնարկած վերջնական ձևավորման պահին Նախիջևանը կրկին ճանաչվում է որպես Երևանի նահանգի յոթ գավառներից մեկը⁴:

Ինչ վերաբերում է ազգագրությանը, ապա 1916թ. դրությամբ բնիկ հայերը կազմում էին Նախիջևանի 131-հազարանոց բնակչության 41,2 տոկոսը, այն է՝ 54 հազ. մարդ⁵: Շարուրի հետ միասին վերցրած՝ 211 հազար բնակչության 83 հազար հայեր էին:

Հեղափոխական դրսևորումները Նախիջևանում 1917թ.:

Նախիջևանը, գավառի վերոնշյալ կարգավիճակով, տեղափոխվել է 1917-ի ռուսական հեղափոխությունների փուլ: Փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության պայմաններում երկրամասն ու մեծ նվաճումներ ձեռք բերաց Կովկասյան ռազմաճակատը քիչ թե շատ պահպանում էին իրենց կայունությունն ու կառավարելիությունը: Սակայն Հոկտեմբերյան հեղափոխությունը, հանգեցրեց ավելի ծանր հետևանքների: 1917թ. դեկտեմբերից սկսվել է Կովկասյան ռազմաճակատում տեղակայված ռուսական բանակի քայքայումը: 1918թ. հունվարին օսմանյան զորքերը խզել են Երզնկայում կնքված զինադադարն ու անցել առաջխաղացման: Դա անմիջապես ապակայունացրեց ամբողջ Անդրկովկասն ու հատկապես Երևանի նահանգը: Թիֆլիսում գործող Հայոց ազգային խորհուրդը ճգնում էր կազմակերպել ազգային ինքնապաշտպանություն, իսկ նահանգի քուրդ ու թաթարական զանգվածները նենգադուլ արեցին այդ նախաձեռնությունը: Նրանք քանդում էին երկաթուղու հատ-//-209 վածներ, կտրում հեռախոսահեռագրաթելեր, թալանում ճանապարհներում, հարձակվում ոչ միայն Վայոց ձորի և Նախիջևանի, այլև Երևանի մոտակայքում գտնվող հայկական գյուղերի վրա: Նրանց գումարվում էին Բաշ-Նորաշենի, Շահթախտի⁶, Ելիսավետպոլի և Շամխորի մոտ Շարուրի և Ելիսավետպոլի Մահմեդական ազգային խորհուրդների (ՄԱԽ) կազմակերպված հարձակումները՝ զենքերով ու նահանջող ռուս զինվորներով լի գնացքների վրա: Ի պատասխան՝ տեղերում ստեղծվել են հայկական միլիցիայի ջոկատներ:

1918ի փետրվարին, հակադրվելով Անդրկովկասյան կոմիսարիատին ու նրա՝ հանրապետական Ռուսաստանի ու բուրժուական հեղափոխության հանդեպ շարունակվող հավատարմությանը, գավառի

⁴ Խ.Յ.Ավդալբեգյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801-1917թթ.), Երևան, Հայպետհրատ, 1959, էջ 6-10; Հայ ժողովրդի պատմություն, 8 հատ., Հատ.V, Երևան, ՀՍՍՀ ՊԱ, 1974, էջ 13, 204-210, 219; Հատ.VI, 1981, էջ 15-16:

⁵ Նախիջևան-Շարուրը 1918-1921թթ., Փաստաթղթեր և նյութեր, Խմբ.Վ.Ն.Ղազարխեցյան, Երևան, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, № 1-2, էջ 25 (այսուհետև՝ Նախիջևան-Շարուրը); Ա.Ա.Այվազյան, նշվ.աշխ., էջ 7; Է.Ա.Ջոհրաբյան, Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918թ., Երևան, Հայաստան, 2000, էջ 77:

⁶ Նախիջևանի ևս մեկ ուշագրավ կենտրոն է հանդիսանում մ.թ.ա. III դ. հիմնադրված թագավորանիստ քաղաք Արքաշատը (Արշատը): Նրա տարածքում հայտնաբերվել են մ.թ.ա. II-I հազարամյակին պատկանող Վանի թագավորության թաղումներ ու սեպագրերը: Տե՛ս Ա.Ա.Այվազյան, նշվ.աշխ., էջ 157-159:

ՄԱԽ-ը Նախիջևանի Հայոց ազգային խորհրդին առաջարկել է միացնել տվյալ շրջանը Պարսկաստանին: Մահմեդական ատյանը մերժումը ստանալուց հետո առաջարկել է հռչակել Նախիջևանի անկախությունը: Սակայն հայերի վերաբերմունքը չի փոխվել՝ ո՛չ Վրաստանն ու Հայաստանը, ո՛չ էլ Թիֆլիսում կամ Գանձակում տնավորված թաթարների պետերը նման գաղափարներ չէին բարձրաձայնում: Բաքուն էլ պարզապես խորհրդային Ռուսաստանի մի մասն էր: Այդ ամենին հակառակ փետրվարի 22-ին ՄԱԽ-ը Նախիջևան քաղաքի մեջ կազմակերպել է մի խառնաժողով ու հայտարարել իրենց «անկախ խանությունը» կազմա-կերպելու մասին⁷:

Հարկ է նշել մեկ այլ ուշագրավ իրադարձություն, որը տեղի է ունեցել այդ նախաձեռնությունից առաջ. Արևմտյան Հայաստանում ազգային ազատագրական շարժման եռանդուն մասնակից՝ Բալկանյան պատերազմներից ի վեր կռվի բովով թրծված Ա.Թորգոմը (Արշակ Երվանդյանը) 1918թ. փետրվարի 13ին Կարինում անցկացրել է զորահանդես ու հռչակել Հայաստանի անկախությունը, իսկ Կարինը (Էրզրումը) հայտարարել է նոր պետության մայրաքաղաք⁸: Հայտարարության հիմքում ազատության, արդարության և օրենքի սկզբունքներն էին, վերջին քառասուն տարում ծավալված մշտական կոտորածների ու զանգվածային արտագաղթի միջոցներով ժողովրդի կանխամտածված ոչնչացմանն ուղղված՝ օսմանյան պետության քաղաքականության, հատկապես վերջին չորս տարվա եղեռնագործության աննկարագրելի տանջանքների փաստը, ինչպես և հայերի աներևակայելի տուկունության դրսևորումը, //-210 նրանց՝ համամարդկային և ազգային արժեքները պահելու ունակությունը: Երիտթուրքական իշխանության ամբողջ քաղաքականությունը անհնար էր դարձնում հայերի գոյատևումը մեկ ընդհանուր պետության մեջ: Այն ավելի քան բավարար հիմք էր տալիս Հայաստանի անկախությունը հռչակելու համար:

1918թ. փետրվարի 13-ի թվակիր Հայաստանի անկախությունը հռչակելու Ակտը կայացել է ամբողջ ռազմաճակատով սկսած թուրքական առաջխաղացման հաջորդ օրը: Այն հակամարտության մեջ էր մտնում Բրեստ-Լիտովսկում ընթացող բանակցությունների հետ: Ակտը

⁷ Հ.Ռ.Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, 2 գրքով, գիրք Բ, Երևան, Կախսա, 1996, էջ 201; Է.Ա.Զոհրաբյան, Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում, էջ 79:

⁸ Հայաստանի անկախությունը հռչակելու Ակտը ամբողջությամբ ներկայացվել ու ներգրավվել է ԱՄՆ-ի Կոնգրեսի վավերագրերի դիվանն ու հրապարակվել է. Maintenance of Peace in Armenia. Hearing before Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, 66th Congress, 1st Session on Senate Joint Resolution № 106 A Joint Resolution for the Maintenance of Peace in Armenia. Wash., GPO, 1919, p.60-62; "Armenian Review," 1980, vol.33, № 4, p.441-443; հռչակման մասին տե՛ս նաև Վ.Թորգոմենց [Ա.Մարմարեան], Զօր.Անդրանիկ եւ իւր պատերազմները: Կ.Պօլիս, Կիւլթնպէրկ, 1920, էջ 311-312, 315-316; Ա.Թէրզիպաշեան, Անդրանիկ: Paris, A.Der Agopian, 1942, էջ 332-333; Հայկական հարց, Հանրագիտարան: Երևան, Հայկական հանրագիտարան, 1996, էջ 136:

երկու հնարավորություն էր բացահայտում: Նրանցից մեկը պարունակում էր մշակվող պայմանագրի դրույթների ճանաչում, ստորադրություն խորհրդային իշխանությանն ու թուրքերին հանձնում Արևմտյան Հայաստանի մեկ երրորդը՝ Արևելյան Հայաստանի կեսի հետ միասին: Ըստ էության, այդ բոլոր քայլերը մինևույն է՝ չէին արգելում մինչև Բաքու ծրագրված թուրքական ռազմարշավն ու միմիայն ճանապարհ էր բացում նման գործողության համար: Մյուս հնարավորությունը թելադրում էր հայկական պետության ձևավորում և Կարինից սկսած՝ ամենուր և հնարավորինս ուժգին դիմադրություն ցույց տալ: Առաջին տարբերակը նշանակում էր Արևելյան Հայաստանի կլանումը Օսմանյան կայսրության կողմից: Երկրորդը տեղափոխում էր հայերի դիմադրությունը նրա սահմանների ներս:

ՄԱԽ-ի՝ Նախիջևանի անկախության հայտարարությունը նման պայմաններում նշանակում էր մեծացնել Բրեստ-Լիտովսկում թուրքերին զիջվող ռազմավարն, ու այս անգամ ոչ թե Կարսի մարզի, այլ՝ Երևանի նահանգի հաշվին: Նման նախաձեռնությունից վերապահ էին Գանձակի կամ Թիֆլիսի թաթար պարագլուխները: Հետևաբար՝ այն գալիս էր օսմանյան բանակից: Թաթարների ընդհանուր անկախության գա-ղափարը հասունացավ 1918թ. մայիսի վերջին՝ որպես մայիսի 26-ին Անդրկովկասի պատվիրակության նախագահին արձակած թուրքական վերջնագրի արգասիք⁹: Հաշվի առնելով իրենց բանակը Նախիջևանի երկաթուղով Բաքու տեղափոխելու անթաքուն ձգտումը (ինչի համար թուրքերը կռիվ էին մղում մարտ ամսից), Նախիջևանի «անկախ խանությունը» ծառայում էր ի շահ Թուրքիայի, և ոչ թե՝ երկրամասի թաթարների: Եվ իսկապես, //211 մարտին Նախիջևանի մահմեդականները գրոհեցին ոչ թե հյուսիս-արևելյան ուղղությամբ՝ դեպի թաթար տարրի հիմնական բնակավայրը, այլ շարժվեցին Բայազետի ճամփան

⁹ Թուրքիան, մայիսի 26-ի վերջնագրով անմիջապես նշել է Բաքուն որպես նրա նպատակ, տե՛ս *Документы и матерьялы по внешней политике Закавказья и Грузии. Типлусь, типография Прав. Груз. Респ., 1919, с.309.* Նա հսկայական տարածքային հավելում է պահանջել՝ որը ներառում էր Նախիջևանի ամբողջ գավառը, առանց Օրդուբադի: Վերջինս նախատեսել են երկրամասի արհեստածին Ադրբեջանի համար: Տեղին է շեշտել, որ Խալիլ փաշան ու Վեհիբը երբեք չէին հիմնավորում իրենց հավակնությունները պատմական, տնտեսական կամ ազգագրական փաստարկներով: Նրանք խոսում էին բացառապես զավթի իրավունքների և ուղիղ բռնագրավման մաստի: Ըստ Վեհիբի, կորցնելով բալկանյան և Աֆրիկայի հողերը, Օսմանյան կայսրությունը շարժվեց երևելք՝ իր արևմտյան կորուստները լրացնելու մտադրությամբ: Արևելյան ճանապարհի վրա նրան հետաքրքրում էին երկու ուղղություն՝ դեպի Գանձակ կամ դեպի Արաքս - Կուր գետերի հովիտը, այնուհետև՝ երկուսն էլ տանում էին Բաքու: Երկրորդ ուղղությունն անցնում էր Շարուրի, Նախիջևանի և Ջանգեզուրի վրայով (Ա.Խատիսեան, Հայաստանի Հանրապետության Ծագումն ու Ջարգացումը, Բ տիպ.: Բեյրութ, Համազգային, 1968, էջ 86-ում գետեղված Վեհիսի լուսաբանումը տրվել է մայիսի 30-ին, Բաթումի կոնֆերանսի 3-րդ նիստում (տե՛ս նաև էջ 72, 77), նաև R.Hovannisian, *Armenia on the Road to Independence*, 1918. Berkeley & Los Angeles, University of California Press, 1967, p.195: Հայաստանի համար Բաթումի պայմանագրով նախատեսված կապանքներից դուրս իրականացվող թուրքերի ցեղասպան քաղաքականության մասին տե՛ս Յ.Ռ.Սիմոնյան, *նշվ.աշխ.*, էջ 242, 259:

գրավելու: Սա անմիջապես հանգեցրեց հայկական գյուղերի պաշարման:

Ապրիլ և մայիսը հազեցած էին այս գյուղերի պաշտպանական արյունալի մարտերով, իսկ 1918թ. հունիսի 4-ին Անդրկովկասի երեք հանրապետությունները օսմանյան կառավարության հետ կնքեցին Բաթումի պայմանագիրը՝ նորանկախ Հայաստանի առաջին համաձայնագիրը: Այն նախատեսում էր Նախիջևան գավառի կորուստ՝ ի օգուտ օսմանցիների և Գողթան ստորադասումը՝ թաթարներին:

Անդրանիկը Նախիջևանում 1918թ. ամռանը:

Հայաստանի հինավուրց այս մասը փրկելու համար զօրավար Անդրանիկ Օզանյանը այստեղ արշավեց իր 1.400 հոգուց բաղկացած Առանձին Հարվածային զորամասով¹⁰ և նրա զինուժի խնամարկյալ 20 հազար գաղթականներով: Անդրանիկը մերժեց էր Բաթումի պայմանագիրը, քանի որ այն չէր նվազեցրել Բրեստի կորուստներն ու չէր ապահովել անվտանգության որևէ երաշխիք: 1918թ. հունիսի 7-ին զօրավարը իր մարտիկներով գնացել է Պարսկաստան, ուր կարող էր միանալ անգլիական զորքերին: Բայց, դրա անհնարիություն պատճառով նա վերադարձել է Նախիջևան¹¹: Ջորամասն ու գաղթականները հզորացնում էին շրջանի պաշտպանությունն ու բարելավում նրա ազգագրական պատկերը, մանավանդ, որ գավառում սով չէր: Ավելին, թուրքական հետապնդումներից թեկուզ ժամանակավոր ազատվելու համար զորամասը պայտեցրել էր երկաթուղային կամուրջն ու թունելները, կիլոմետրերով քանդել երկաթգիծը: Այնուամենայնիվ, հունիսի 18-20-ին ու հուլիսի 2-10-ին Նախիջևանի հայությունը և իշխանությունները վերապահ գտնվեցին ինքնապաշտպանության հարցերում ու չձգտեցին իրենց մոտ տեղավորել գաղթական զանգվածը¹²: Ինչ վերաբերում է Անդրանիկին, ապա նա ջանում էր չեզոքացնել այս շրջանի հանդեպ ցուցաբերված թուրքական, տեղի թաթարների և որոշ չափով նաև պարսկական հավակնությունները, մանավանդ որ Հայաստանի Հանրապետությունը իրեն չէր հռչակել Նախիջևանի ինքնիշխան: //-212

¹⁰ Ե.Քաջունի, Հայկական Առանձին Հարուածող Ջորամասը, Ժեներալ Անդրանիկ: Պոսթոն, Ազգ, 1921, էջ 10: Մեկուկես հազարից պակաս հմուտ ու կազմակերպված մարտիկները՝ կարող հրամանատարության ներքո, բավական էին 20, այնուհետև 35 հազ. խաղաղ բնակչության կյանքը պաշտպանելու համար:

¹¹ Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ), Երևան, ֆոնդ 370, ցուցակ 1, գործ 38, թերթ 26; նաև՝ G.Korganoff, La participation des arméniens à la guerre mondiale sur e front du Caucase (1914-1918). Paris, Massis, 1927, p.162: 1918թ. հունիսի 18-ին Անդրանիկի մարտիկները մտել են Նախիջևան քաղաք, ամսի 20-ին նրանք Ջուլֆայում էին: Հունիսի 21-24-ին Հարվածային Ջորամասն ու գաղթականները գտվում էին Պարսկաստանում: Ավելի ուշ՝ Խոյի մոտակայքում ծանր մարտերի բռնվելուց հետո, նրանք վերադարձան Առաքսի ձախ ափն և հունիսի 25-ին շարժվեցին Գողթն, որտեղ հիվանդացած Անդրանիկը բուժում էր ստանում Ցղնա գյուղում: Հուլիսի 9-12-ը ինքը այնտեղից Ապրակունիս է տեղափոխել իր մարտիկներին ու գաղթականությանը:

¹² Ե.Քաջունի, նշվ.աշխ., էջ 70-71, 73-74, 76; նաև՝ Հ.Ռ.Սիմոնյան, նշվ.աշխ., էջ 213, 216-217, 237, 243, 245, 248, 285:

Իր նպատակին հասնելու համար, 1918թ. հուլիսի 13-ին Անդրանիկը Ապրակունիսի ս.Կարապետ վանքում գումարեց խորհրդակցություն¹³ ՀԱԽ-ի լիազորների հետ՝ ի դեմս նրա նախագահ Կարապետ Աղայանի, տեղի առաջնորդ Սիոն վարդապետի և ՀԱԽ-ի Ռազմական մարմնի մասնակցությամբ՝ ի դեմս Նախիջևանի պաշտպանության շտաբի պետ, միաժամանակ Ջուլֆայի Ռազմական խորհրդի նախագահ և Ջուլֆայի կայազորի պետ Երվանդ Խարազյանի, Գողթնում ՀԱԽ-ի լիազոր և Ագուլիսի քաղաքագլուխ Արտավազդ Մարտիրոսյանի:

Հաջորդ օրը՝ հուլիսի 14-ին, նրանք հրապարակում են համատեղ մեկ ծրագիր: Դրան համաձայն՝ 1) Անդրանիկը իր զորամասը ենթարկում էր Ռուսաստանի կենտրոնական կառավարությանը, 2) հիմք ընդունելով Բրեստի պայմանագիրը՝ Նախիջևանը հռչակվում էր Ռուսաստանի անքակտելի մաս, 3) բնակիչները, անկախ ազգային պատկանելիությունից, հանձնում էին բոլոր զենքերը, 4) շրջանում մտցվում էր ռազմական դրություն՝ Անդրանիկի հրամանատարության ներքո: Նույն օրը Ջօրամասի 3-րդ գումարտակի հրամանատար կապիտան Խ.Բոնապարտյանը Բաքու է հեռագրել բոլշևիկների Կովկասի հարցերով արտակարգ կոմիսար Ստեփան Շահունյանին: Այդ տեղեկանքով զորավարը խնդրել է հայտնել Մոսկվայի իշխանությանը նրա զորաբաժնին Ռուսաստանի կենտրոնական իշխանությունների կարգադրություններին ենթարկելու մասին: Նա խոստանում էր խոչընդոտել թուրքական զորքերի մտնելը Նախիջևան ու հայցում էր հետագա հրահանգներ¹⁴:

1918թ. հուլիսի 16-ին Հարվածային Ջօրամասը հաջողությամբ զինաթափեց Յայճի գյուղը, իսկ ՄԱԽ-ը օգնություն հայցեց Շատթափատում տեղակայված օսմանյան զինուժի շտաբից: Հուլիսի 18-19-ին Նախիջևան քաղաքին են մոտենում օսմանյան երկու գունդ՝ 9 թնդանոթներով ու 16 գնդացիներով զինված: 400 պաշտպանների դեմ վարած համառ մարտում թուրքերը ամսի 19-ի երեկոյան գրավում են քաղաքը: Կռիվներից՝ գավառի կենտրոնի հետ կործանվել էր նաև Ջուլֆան: Հուլիսի 20-ին Անդրանիկի Հարվածային Ջօրամասը և նրանից անբաժան այժմ 35 հազար փախստականները (տեղի բնակիչները ներառեալ) հեռացան Գողթան ուղղությամբ: Այն գուղացիները, որոնք ողջունում էին

¹³ 1381-ին հիմնադրված վանքը բացվել է 1369-1391թթ. գործող միջնադարյան համալսարանի պատերում: Վերջինը սկիզբ է ս.Գեորգ եկեղեցու տանիքի ներքո՝ Մաղաքիա Ղրիմեցու տոկունությամբ: Ապրակունիսի համալսարանը առնչվում է XIV դ. գիտնականներ ու լուսավորիչներ եռամեծ Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու անունների հետ: Արիստոտելի հետևորդ, այնտեղ է 1386թ. մեռել ու թաղվել է Հովհանը, որը հավատում էր ընդհանուրի՝ իրենց հատկություններով միատարր եզակիներից կազմված ու նրանցից կապված լինելու, բնության սկիզբ ունենալու, բայց վերջ չունենալու գաղափարին:

¹⁴ ՀԱԱ, ֆ.370, ց.1, գ.41, թ.5-6; ց.2, գ.15, թ.2-3; նաև՝ Ե.Քաջունի, նշվ.աշխ., էջ 68-69; Андраник Озаян, Документы и материалы, сост.А.Арутюнян и др. Ереван, Ин-т истории НАА РА, 1991, с.288-289; Նախիջևան-Շարուրը, էջ 41-45; Ա.Չելեպյան, Ջորավար Անդրանիկ: Երևան, Արևիկ, 1990, էջ 475-476, 515; Հ.Ռ.Սիմոնյան, նշվ.աշխ., էջ 262-263, 265:

զավթիչներին ու զենք հանձնում, Աստապատի 2.500 բնակիչների // 213 նման, ինչպես և գավառաձևիստ նախիջևանցիները, ենթարկվեցին կոտորածի, նրանց տները թալանվեցին, իսկ մարդկանց տանջեցին ամենադաժան կերպով: Գողթն հասնելու պես անդրանիկը ընդունել է Ագուլիսից ուղարկած պատվիրակությանը, որը նրան հաղորդել է օրդուբադցիների խնդրանքը՝ չմտնել իրենց քաղաքն ու սարերի վրայով տեղափոխվել Ջանգեզուր: Խնդրողները չէին ուզում «սադրել» թուրքերը, թեև վերջինները ինքնուրույն կերպով մշակում էին իրենց գավթողական ծրագրերը:



Ի վերջո, օսմանյան բանակը Վերին Ազա գյուղի մոտ հայերի համառ դիմադրությունը հաղթահարելուց հետո 1918թ. օգոստոսի 8-ին մտավ Օրդուբադ: Թեև Գողթան հարավային մասը հսկվում էր զավթիչների զենքով, նրա հյուսիսային ու լեռնոտ կողմը՝ Բիստ, Ալահի, Մորվանիս, Փառակա, Ռամիս գյուղերով հանդերձ մնացել է ազատ: Ու թեև Խալիլ բեյն ու նրա ընտանիքը մինչև հոկտեմբերի վերջը բնակվում էին Գողթան կենտրոն Օրդուբադում, իսկ օգոստոսի 23-ին թուրքերը ձեռնարկել էին նոր լայնածավալ հարձակում, նրանք, այնուամենայնիվ, չկարողացան գրավել այդ տեղամասն ամբողջությամբ: Սակայն, այս փոքր բացառությամբ հանդերձ՝ հուլիս-օգոստոս ամիսներին հայկական բնակչությունը ամբողջապես դուրս քշվեց Նախիջևանից: Ելնելով ՀՀ ԽՍՀՄ-ի տվյալներից, վերաշինության և աշխատանքի // 214 միլիտարության տվյալներից, գավառի 38.500 բնակիչներից 34.500 հայեր բռնել են փախուստի ցուպը հետևյալ ուղղություններով.- 13.000՝ Ջանգեզուր, 8.000՝ Երևան, 7.500՝ Նոր Բայազետ ու 5.000՝ Թիֆլիս:

Նրանցից համարեայ 15.000-ը մեռել էին մինչև 1919թ. գարնան ավարտը¹⁵:

Անդրանիկի հեռագիրը Մոսկվայից քաղաքական արձագանք չի ստացել ու չի ուղեկցվել բուլշևիկների ռազմական օժանդակությամբ: Այնինչ՝ 1918թ. ապրիլի 6-ի վիճակով Անդրանիկը Ալեքսանդրապոլում զգուշացրել է Հայկական կորպուսի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Թ.Նազարբեկյանին, թե թշնամու գլխավոր թիրախը գտնվում է Կասպից տարածաշրջանում՝ Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերով նախատեսված սահմաններից շատ հեռու¹⁶:

Նախիջևանը Առաջին աշխարհամարտի ավարտից հետո:

Նախիջևանի ծանրագույն ռազմագրավումը չի ավարտվել Օսմանյան Թուրքիայի՝ Առաջին աշխարհամարտում ջախջախման հետ միասին: Կայսրությունը միտք չունեի կատարել Մուդրոսի զինադադարն ու 1914-ի ռուս-թուրքական սահմանին հետ քաշել 47.000 ասկյարներին: 1919թ. հունվարի 17-18-ին Կարսում հավաքվել է հարյուրից ավելի մարտատենչ ամբոխ, որն հայտարարել է «Հարավարևմտյան կովկասյան հանրապետության»¹⁷ գոյացման մասին: Այդ շրջանը դիտվում էր որպես ինքնավար միավոր՝ օսմանյան դրոշով ու զինանշանով, որտեղ պաշտոնական լեզուն սահմանվել էր թուրքերենը: «Ինքնավարությունը» տեղյակ է պահել հանրությանը իր նկրտումների մասին՝ Բաթումից մինչև Նախիջևան ձգվող բոլոր հողերի նկատմամբ: Հավաքի պարագլուխները դեմ էին արևմտահայ նահանգների անջատման Օսմանյան կայսրությունից, և պատրաստ էին բնաջնջել ամբողջ հայությանը իրենց հորինված «սահմանների» ներսում: Խառնաժողովի դեկավարներն ու կազմակերպիչները՝ Էսադ Օքտայը, Սերվետ բեկ Ահաբեկովը, Ջհանգիր զադե Իբրահիմ բեյը, Ասադ բեկ Հաջիևը, խոստանալով նոր ռազմական գործողություններ սկսել Անտանտի տերությունների դեմ, հեռագրեր են հղել հաղթանակած երկրների կառավարություններին՝ պարզորոշ հայտնելով իրենց տեսակետը:

Անգլիացիները համաձայն չէին նման մոտեցմանը. չէ՞ որ //215 ա-

¹⁵ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.212, թ.89; Ա.Եփրիկյան, Փաստաթղթեր Շարուր-Նախիջևանի հայ զաղթականների խնդիրների մասին: «Բանբեր Հայաստանի արխիվների», 2009, № 2, էջ 57-58:

¹⁶ Ջօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, 1914-1917, Օրագրուած գօրավարին թիկնապահ զինուորէն: Պոսթոն, Պայքար, 1924, էջ 96-97: Հրատարակվել է. Ա.Չելեկյան, նշվ.աշխ., էջ 441; Հ.Ռ.Սիմոնյան, նշվ.աշխ., էջ 86-87: Տե՛ս նաև Ա.Ջոհրաբեյանի, Ս.Խաչատրյանի, Ա.Երզնկյանի, Ս.Հարությունյանի, Հովհաննես Թումանյանի, Արամ Մանուկյանի, Ա.Ահարոնյանի, հատկապես Ս.Փիրունյանի ելույթները Հայոծ ազգային խորհրդի Թիֆլիսում 1918թ. ապրիլի 12ին գումարված նիստում՝ ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, թ.174-176: Նույն վտանգի մասին զգուշացրել էր Լեոն Ալեքսանդրապոլում անցկացրած արտակարգ խորհրդակցության ն.թ. ապրիլի 20-ի նիստում (գ.123, թ.13 դարձ) և Ս.Մամիկոնյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը՝ Կենտրոնական ՀԱԽ-ի ապրիլի 25-ի նիստում (գ.141, թ.181-181 դարձ):

¹⁷ Տե՛ս նաև՝ Յ.Ղուկյան, Մահմեդական բնակչության հակապետական ելույթները ՀՀ-ի դեմ (1919թ.): «Բանբեր Հայաստանի արխիվների», 2011, № 1, էջ 116:

րևնտյան Անդրկովկասը հսկող նրանց զորքերի հրամանատար Ջ.Տ.Ֆորեստյե-Ուոկերը, 1919թ. հունվարի 7-ին ընդունելով օսմանյան 9-րդ բանակի հրամանատար Շևքի փաշային, նրան հուշագիր հանձնեց ու հրամայեց մինչև ընթացիկ անսվա վերջը մինչպատերազմյան սահմանից հետ քաշել ամբողջ զինված համակազմը¹⁸: Անգլիացիները սկսում են համալրել իրենց ստորաբաժանումները երկրամասում: Այնուհետև Ջ.Տ.Ֆորեստյե-Ուոկերը միջամտում է ՀՀ բանակի և Շարուր-Նախիջևանի 10-հազարանոց մահմեդական ջոկատի միջև զինադադարին¹⁹, որով ապահովվում էր փախստականների տունդարձը, ինչին խոչընդոտում էին զինյալ մահմեդականները: Բրիտանական առաքելության սպաները, բանակցելով երկու կողմերի հետ, հունվարի 26-ին ստեղծեցին իրենց ռազմական նահանգապետությունը՝ կապիտան Ֆ.Լաուտոնի գլխավորությամբ: Ամսի 29-ին բրիտանական առաջին վաշտը մտավ Նախիջևան: Փետրվարի 10-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բանակը նահանջեց դեպի Արարատ (Ղավալու) և Վեդի գետից հյուսիս՝ դեպի հին Արտաշատ (Ղամարլու²⁰): Ամբողջությամբ վերցրած՝ անգլիացիները 800 զինվոր են տեղավորել գավառով մեկ:

Նրանց ուժգին, անմիջական ճնշման ներքո 1919թ. մարտի 15-ին վերջին ասկյարները թողել են Արևելյան Հայաստանը: Սակայն գարնանը ի հայտ է գալիս մի նոր երևույթ՝ թուրքերի ռազմագրավումը փոխարինվում էր թաթարական դիմադրության կազմակերպմամբ: Նախիջևան ժամանեցին Բաքվի ներկայացուցիչ Սամեդ բեյն ու թուրք գնդապետ Խալիլը: Նահանգապետ Ֆ.Լաուտոնը հակված էր գործակցելու մահմեդականների հետ, սակայն ստիպված էր բողոքել Թիֆլիս՝ թաթարների անհնազանդ վարքից: Հետևաբար՝ նրան փոխարինում է գնդապետ Ջ.Սիմպսոնը: Անգլիացիները շարունակ համալրում են իրենց ուժերն Անդրկովկասում, բայց ապրիլի 2-3-ին նրանց քաղաքականությունը բեկում ապրեց. Ղաշնակիցների Կ.Պոլսում ու երկրամասում առկա հրամանատարությունն իր համաձայնությունն է տալիս ՀՀ-ին հանձնել մինչև Ջուլֆա ձգվող երկաթգիծն ու վերաբնակեցնել երևանից հարավ տնավորված մահմեդականներին: Նրանք պետք է տեղափոխվեին Շարուր-Նախիջևան: Սակայն այդ քայլի հետ մեկտեղ, երկրամասի //-216 բրիտանական շտաբը Թիֆլիսից Փարիզ էր ուղարկում քարտեզներ, որոնք վկայում էին Շարուրի, Նախիջևանի, Ջանգեզուրի՝ Հայաստանի մաս լինելու մասին:

Հայկական վարչության հաստատումն ու կործանումը:

1919թ. ապրիլի 4-ին զորավար Բ.Մ.Դելվին, որպես 27-րդ դիվիզիայի հարավային թևի հրամանատար, գործուղվել է ՀՀ մայրաքա-

¹⁸ ՀԱԱ, ֆ.200, ց.2, գ.39, ք.9-12:

¹⁹ Նույն տեղում, գ.120, ք.1:

²⁰ Բրիտանական ռազմական նահանգապետության մասին տես՝ Է.Ա.Ջոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «ղաաշնակիցները» (1918թ. դեկտեմբեր - 1920թ. ապրիլ): Երևան, Տիգրան Մեծ տպր., 2002, էջ 60, 63:

ղաք: Նրա լիազորության շրջանակներում էին Երևանը, Կարսն ու Նախիջևանը: Ջորավարին տրված հրահանգներում նշվել էր. «Նախիջևանի շրջանը հանձնվելու է հայկական կառավարության վարման մինչև Չաշտության կոնֆերանսի կարգավորումը²¹»: Ապրիլի 19-ին ՅՅ-ին է հանձնվել վարչական իրավասությունը Կարսում: Այնուհետև հեռանալու պատրաստ անգլիական բանակն անցել է փախստականների հայրենադարձության և Նախիջևանում հայկական վարչակազմի վերականգնման խնդիրներին: Այդ քայլերը հակասում են մեր հաճախակի պնդումներին, թե Մեծ Բրիտանիան մշտապես թշնամական է հայերի հանդեպ մեր հավասարապես մշտական ռուսական կողմնորոշման պատճառով: Երկու կարևոր հարցերի առնչությամբ Անգլիան չի գերադասել մեր մրցակիցներին՝ Կովկասի թաթարներին, վերջինների թրքամետությամբ հանդերձ:

Նախիջևանին ու Կարսին վերաբերող որոշումները ցույց են տալիս, որ մեր նախկին մեկնաբանությունները հակասում են քաղաքական թեկուզ հազվադեպ, բայց կարևոր իրողություններին: Բրիտանացիք բոլորովին չէին շփոթվում հայերի՝ Ռուսաստանի հանդեպ դրական այն վերաբերմունքի առնչությամբ, որն այն պահին մնում էր իր սովորական շրջանակներում:

Հասկանալի է, ցանկացած կողմնորոշում վկայում է նրա կրողների տկարության մասին: Նրա կրողների ուժերը չեն պատում սեփական ժողովրդի ֆիզիկական անվտանգությունը ապահովելու համար: Կողմնորոշումը տարբեր է բարեկամությունից, ռազմատնտեսական կամ քաղաքական համագործակցությունից՝ թեկուզ կրտսեր թիմակիցների դերում: Կողմնորոշումը պարունակում է պաշտպանողների, հովանավորողների փնտրտուք՝ դրանից բխող հասարակական-քաղաքական կախվածությամբ հանդերձ: Սակայն 1917-1919թթ. Ռուսաստանը հեղափոխության // -217 թոհուրոհում էր, այսինքն՝ պատված էր արյունալի և կործանիչ քաղաքացիական պատերազմով: Նա չէր կարող պաշտպանել Անդրկովկասը, անգամ նոր գաղափարները որդեգրած խորհրդրային Բաքվի այն հայերին, որոնք այդքան հեռու էին գտնվում Բրեստ-Լիտովսկում նախատեսված սահմաններից: Հետևաբար ռուսական քաղաքական կողմնորոշումը իրականում անհնար է եղել, իսկ Բրիտանիայի հետ ունեցած համագործակցությունը կախված էր նրա ռազմական ներուժից միայն²²:

Բրիտանական զորքի դուրս բերման նախապատրաստական փու-

²¹ R.Hovannisian, *The Republic of Armenia, vol.I The First Year, 1918-1919. Berkeley & Los Angeles, University of California Press, 1971, p.215.*

²² 1850-1950-ական թվականներին ցանկացած անկախ պետության գլխավոր հատկանիշը իր բնակչության ինքնուրույն պաշտպանությունն էր արտաքին հնարավոր հարձակումից: Սակայն 1950-ական թվականներից ի վեր շատ քիչ թվով գերտերություններ ի վիճակի են ապահովել նման անվտանգությունը: Այսօր պետությունների ճնշող մասը պաշտպանվում է համախմբված ուժերով՝ անդամակցելով ռազմաքաղաքական միությունների:

լում Կարսի կայունացումն ու երևանամերձ մահմեդական Ջանգիբասարը²³ ՅՅ-ին ստորարդրելը, Նախիջևանում ազգային վարչակարգի ամրապնդումն ու քուրդ, թաթար բնակիչների հետ համագործակցությունը խաղաղություն ու քաղաքական կայունություն էին բերում, ազդարարում հայերի անկախության կայացած լինելը: Ի պատասխան՝ օսմանյան բարձր ղեկավարությունը, փաստերը աղավաղելու և հայկական պետության առաջացման առթիվ իր դերը գովելու սովորությանը հանդերձ, Նախիջևան է գործուղել Խալիլին՝ նրան նշանակելով գավառի մահմեդական ջոկատների շտաբի պետ: Նրան ուժեղացրին փողով, ռազմամթերքով ու մոտ 3.000 զինծառայողներով՝ Բայազետում տեղակայված Կովկասյան հետևակային 11-րդ դիվիզիայի շարքերից: Ավելին՝ տեղական բնակչությանը պարտադրել են ռազմական վարժանք, իսկ պատերազմին մասնակցելու դժկամ գյուղերը՝ ճնշվել²⁴:

Մ.Ս.Դեվին 1919թ. մայիսի 3-ին, Դ.Կանայանի հետ ստորագրում է Յրաման Նախիջևանի շրջանի ազգաբնակչության, այստեղ հայկական վարչությունը հաստատելու մասին: Նահանգապետի պաշտոնը ստանձնում էր Գեորգ Պետրոսի Վարչամյանը, շրջանը բաժանում երեք մասի՝ Գողթնը (Օրդուբադ) իր Ագուլիս կենտրոնով, Նախիջևանը՝ համանուն քաղաքի կենտրոնով, ու Շարուրը՝ Նորաշենի կենտրոնով: Մայիսի 14-ին Գ.Վարչամյանը ժամանեց գավառ, ՅՅ վարչապետ Ա.Խատիսյանի ու բրիգադի գեներալ Բ.Ս.Դեվիի ուղեկցությամբ: Ժամանման հաջորդ օրը նրանք եկել են Ջուլֆա, իսկ բրիտանացի ռազմական նահանգապետ գնդապետ Ջ.Սիմպսոնին փոխարինել է կայսերական ռազմական առաքելության պետ, կապիտանի պաշտոնակատար Ֆ.Լ.//218 Շվինդր: Ամսի 16-ին ՅՅ վարչապետը մասնակցել է ՄԱԽ-ի նիստին:

Մայիսի 18-ին Ա.Խատիսյանը վերադարձել է Երևան: Նրա գնալուց հետո գավառ են եկել գեներալ մայոր Գ.Յ.Շելկովնիկյանի առաջին հայ զինվորները 2.000 հետևակի հասնող ընդհանուր կայազորից²⁵: Ջուլատը լրացնում էին 4 դաշտային թնդանոթ ու 4 հեծյալ վաշտ, այդ թվում՝ Սասունի հեծելավաշտը Մուշեղ Ավետիսյանի գլխավորությամբ: Բրիտանական զորքերի հարյուրակները տեղաբաշխվել են վճռող դիր-

²³ Երևանի խանության վարչական միավորը՝ XIX դարի սկզբին, ու Երևանի նահանգի բաղադրիչը մինչև 1918թ.՝ Ջանգիբասարի կենտրոնը գտնվում էր Երևանից 9 կմ. հարավարևմուտք: Այն որոգել է Ջանգու (Յրագղան) վետը: Այժմ Մասիսի համայնք ու քաղաք ՅՅ Արարատի մարզում (Վ.Ռ.Գրիգորյան, Երևանի խանությունը XVIII դարի վերջում: Երևան, ՅՍՍՌ ԳԱ, 1958, էջ 33; նաև Խ.Յ.Ավդալբեգյան, նշվ.աշխ., էջ 6; Յայ ժողովրդի պատմություն, հատ.Վ, էջ 14; История армянского народа, ред.М.Г.Нерсисян. Ереван, ЕГУ, 1980, с.183; Է.Ա.Ջոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը (1918-1921): Երևան, ԵՊՀ, 2010, էջ 50-53):

²⁴ ՅԱԱ, ֆ.200, ց.1, գ.427, ք.252-252 դարձ; նաև ֆ.275, ց.5, գ.183, ք.81 դարձ.-82:

²⁵ Գրիգորի Յարությունի Շելկովնիկյանը Նախիջևանի ռազմական նահանգապետ է եղել 1919թ. հունիսի 4-ից (ՅԱԱ, ֆ.199, ց.1, գ.43, ք.130): Ա.Խատիսյանի Նախիջևանում մնալու մասին տես նաև՝ Է.Ա.Ջոհրաբյան, Նախիջևանի հիմնահարցը և Յայաստանի «դաշնակիցները», էջ 99-100:

քերի՝ Դավալու, Սադարակ, Յայճի և Ջահրի գյուղերի վրա: Լրացուցիչ հնդկական ստորաբաժանումները՝ ռազմապուտների շուրջ 2 վաշտ, մնացին գավառի կենտրոնում մինչև Բրիտանիայի ուժերի լիակատար դուրսբերումը Նախիջևանից հունիսի 7-ին: Օգտվելով բրիտանական բանակի բացակայությունից, հուլիսի 1-ից թաթարները սկսել են իրենց հարձակումները Վեդիի մոտ: Հուլիսի 20-25-ին նրանք կատաղի հակամարտություն նախաձեռնեցին ամբողջ Նախիջևանով մեկ: Նրանց գործողությունները թուրք սպաների ղեկավարությամբ էին կատարվում: Էրզրումից Խալիլ բեյին տրամադրել էին հրետանու մասնագետներից սկսած՝ 30 սպաներ: Նույն նպատակներին հասնելու համար Բաբուն տրամադրել է 25 մլն. ռուսական կայսերական ռուբլի և սպայակազմ²⁶:

ՀՀ բանակը ծանր ու դաժան կռիվներից հետո հարկադրված էր նահանջել, իսկ թուրք-թաթարական ելուզակները, քարուքանդ անելով 45 գյուղ, անխտիր սպանեցին 10-12.000 մարդ²⁷, ներառյալ՝ Նախիջևան քաղաքում գործող ամերիկյան հիվանդանոցի վիրավոր ու հիվանդ անձինք: Այդ անենի մասին վկայում էին հուլիսի 28-ին Պարսկաստան փախուստ տված անգլիացիներն²⁸ ու հատկապես Ամերիկյան Նպաստամատույցի աշխատակիցները, որոնք ահավոր թվով գլխատած ու ա-յլանդակված դիակներ են տեսել Արաքսում՝ Ջուղայի կամրջի մոտ: Գետի բոլոր վտակները փակ են եղել մարդկանց մարմիններով: Ամերիկյան հիմնարկներն ու պահեստները շրջանով մեկ թալանված ու կործանված էին:

Օգոստոսի 1-ին բրիտանացիք ու ֆրանսիացիները անմիջական բանակցությունների մեջ են մտել Խալիլի հետ Բաշ Նորաշենում: Նույն ամսի կեսին Երեվանում դաշնակիցների զինվորական //-219 ներկայացուցիչներ փոխգնդապետ Ջ.Չ.Պլաուդենն ու գլխապետ (կապիտան) Ա. Պուադեբարը, մայոր Ս.Չ.Ֆորբսը և Բ.Դ.Աշերը՝ Ամերիկյան Նպաստամատույցից, միասին մեկնել են Նախիջևան՝ երկաթուղային երթևեկությունը մինչ Ջուլֆա վերականգնելու համար: Նրանք ցնցված վերադարձել են Երևան, երբ երեք օր շարունակ Խալիլ բեյը բանակցությունների փոխարեն նրանց ստորացրել է, բռնություն կիրառել ու ձերբակալել: Նա մերժել է ամերիկյան ունեցուածքը վերադարձնելու պահանջը, իսկ գավառի բոլոր կարևոր քաղաքներում, գյուղերում տեղակայել էին թուրք սպաներ ու զինվորներ, որոնք զանգվածաբար համալրվում էին Բայազետից Մակվի վրայով ժամանող համակազմով²⁹: Այժմ հայկա-

²⁶ Տես նաև՝ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.212, ք.114; նաև՝ Ա.Եփրիկյան, Հայաստանի Հանրապետության իշխանության տարածումը Նախիջևանում 1919թ.: «Բանբեր Հայաստանի արխիվների», 2004, № 1, էջ 57:

²⁷ Տես նաև՝ «Слово», Туфлусь, 30.10.1919; նաև՝ Է.Ա.Ջոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը, էջ 152-156, 166-168:

²⁸ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.357, ք.40; նաև՝ Մ.Ա.Ավետիսյան, նշվ.աշխ., էջ 193:

²⁹ R.Hovhannisian, The Republic of Armenia, vol.II From Versailles to London, 1919-1920, Berkeley & Los Angeles, University of California Press, 1982, p.75.

կան վարչությունը բացակայում էր Ջուլֆայից Դավալու ձգվող տարածքում: Այստեղ ողջ էին մնացել ընդամենը մի քանի հարյուր հայ: Ինչպես պարզվել է Ամերկոմի անդամներ Ք.Աշերի և Ք.Այերի՝ սեպտեմբերի 17-26-ին Նախիջևան իրականացրած տեսչական շրջագայությունից, վերապրողների թիվը նվազել էր մեծապես, իսկ նրանց վիճակը սարսափելի էր: «Ադրբեջանում թույլ չեն տա ապրել թեկուզ մեկ հայի»՝ սեպտեմբերի 19-ին նրանց հայտարարել էր տեղական հրոսակների շտաբի պետ Քերբալա խանը: Իսկ Խալիլը սպառնացել է այնպիսի նոր կոտորած սկսել, որ հուլիսինը դրա համեմատ մանկական խաղ տվա³⁰:

Հուլիսյան պատերազմից հետո Սամեդ բեյ Ջամալինսկին ստանձնեց Նախիջևանի գեներալ-նահանգապետի պաշտոնը, իսկ Խալիլ բեյը դարձավ նրա զորքերի հրամանատար: Վերջինս թուրքական օժանդակություն էր խոստացել Ջանգեզուրի գրավման համար ու նոր սպաներ խնդրել էրզրումից³¹: Հարկավոր է նկատի ունենալ 1919-ի արյունալի և անգութ ազգամիջան կռվից սկիզբ արած ալիքաձև տեղաշարժի երևույթը. Շարուրի, Երևանի շրջակայքի կամ Ջանգեզուրի թաթարները փախչում էին Նախիջևան, իսկ այդ շրջանի հայերին վտարում էին Սևան և Ջանգեզուր:

Նախիջևանում թուրքերի նպատակին հասնելուց հետո վտանգվել էր ՀՀ պետական կայունությունն և համապարփակ խաղաղությունը: Այժմ թուրք եւ թաթար համատեղ ուժերն իրենց զավթողական քաղաքականությունը տարածել էին Ջանգեզուրի վրա: Ընդ որում, գրավելու ենթակա կարևոր ուղղությունները և կետերը ընտրվում էին՝ ելնելով միայն նրանց ռազմական նշանակությունից: //-220

Վիլյամ Հասկելի ծրագիրը ամերիկյան նահանգապետության վերաբերյալ:

1919թ. օգոստոսի 21-23-ին Հայաստանի հարցերով Դաշնակիցների Գերագույն հանձնակատար ԱՄՆ-ի բանակի գնդապետ Վիլյամ Ն. Հասկելը ժամանեց Երևան³², օգոստոսի 28-ին մեկնեց Բաքու և առաջարկեց չեզոք գոտի՝ ամերիկյան հսկողությամբ: Օգոստոսի 29-ին Ադրբեջանի վարչապետը համաձայնել է և «ուղղումներ» մտցրել նրան առաջարկված նախագծին: Հետագա խորհրդակցությունների ժամանակ հիմնական բանավեճը ծավալվել է Դարալագյազի, Բաքուից մինչև Ջուղա կառուցվելիք երկաթգծի և ամերիկյան նահանգապետի լիազորությունների հարցերի շուրջ: Նոր մտադրված երկաթուղին ցանկանում էին անցկացնել Ջանգեզուրի հարավային գոտով: Ադրբեջանի իշխանությունները երկու հնարք կիրառեցին, երբ խոսում էին Վ.Հասկելի հետ:

³⁰ Unites States National Archives, Washington D.C., Record Group 256 Records of the American Commission to Negotiate Peace, class 184.021/document 285 (այսուհետև՝ US NA, RG):

³¹ Մամրամասն K.Karabekir, Istiklâl Harbimiz, Istanbul, Türkiye Yayınevi, 1960, s.328-330:

³² ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.362, ք.81:

Առաջին.- նրանք սկզբից բանակցեցին թաթարական մեծամասնությունը պարունակող, ինքնորոշված ու Բաքվին միացած Նախիջևանի անունից: Այնուհետև ջանացին ընդլայնել այդ շրջանը՝ բացարձակապես անվիճելի ու Երևանի կողմից անրորեն հսկվող Դարալագյազի հաշվին, ու թեպետ Դարալագյազը չի գրավվել օսմանյան բանակի՝ նույնիսկ 1918-ի արշավի ժամանակ, հաջորդ քայլով մուսավաթ ղեկավարները «փոխարինում» էին այդ շրջանը այժմ նրանց հարվածի տակ դրած Ջանգեզուրից ՀՀ զորքերը դուրս բերելու հետ: Նահանջի դիմաց խոստանում էին «հանդարտեցնել» երևանամերձ և ապագա գեներալ-նահանգապետության մեջ տնավորված մահմեդականներին: Վ.Հասկելի ծրագրով ու ՀՀ-ի համաձայնությամբ Նախիջևանը պատք է դառնար գեներալ-նահանգապետություն, իսկ Ադրբեջանի մեկնաբանությամբ՝ «չեզոք գոտի»:

Երկրորդ.- թաթարները իրենց են վերագրել ազգերի ինքնորոշման մենաշնորհը: Հայերին վայրագորեն կոտորելով Նախիջևանում, նրանց դուրս քշելով իրենց օջախներից, գողանալով ուրիշի բերքը, հարստությունն ու հողը՝ թուրք-ադրբեջանական դաշինքը անմիջապես պահանջում էր օրինականացնել իր ավազակուքին՝ ելնելով ժողովրդավարության հիմնադրույթ արժեքներից: Թուրքերի և ադրբեջանցիների յուրաքանչյուր խոշոր հարձակումը սկսվում էր //-221 ապագա զոհին հասցեագրած մեղադրանքներով: Ձոհին վերագրելով սեփական գործողությունները՝ զավթիչը «հավասարութեան նշան» էր դնում իր և մյուս կողմի միջև: Նշանակում է՝ նա ի չիք էր դարձնում հարձակման փաստն ու ժխտում նրա զոհի մարդկային արժեքը կամ ցանկացած իրավունքը՝ դրա անվտանգության և անգամ կյանքի հնարավորությունը:

Հատկանշանական է թուրքական և ադրբեջանական ընտրելու ունակությունը, երբ խոսքը եվրոպական քաղաքական գաղափարների կամ իրավակարգի մասին է: Երկու դեպքերում էլ արտերկրից ներմուծվող ուսումնքը երբևիցէ չի ընդունվել ամբողջությամբ: Այն ծառայեցնում են միմիայն շահավետության ու հարմարության տեսանկյունից: Նույննաման ընտրությունը առկա է այլ հարցերում ևս: Օրինակ, Ջանգեզուրից, Շարուրից, Երևանի մերձակայքից փախած թաթարները միտումնավոր ուղարկվում էին ոչ թե արևելք, այլ Նախիջևան, ուր արհեստաբար ուժեղացնում էին նրանց տոկոսային մեծամասնությունը: Նոր զանգվածը բերում էին հայկական գյուղեր ու գեներ տալիս: Շրջանի թաթար նորաբնակները բուրրովին միտք չունեին վերադարձնելու թալանը իսկական տերերին: Այժմ այդ տարրերը հարմար էին հայկական Ջանգեզուրի վրա երկու կողմից հարձակում սկսելու համար: Նման տրամադրություններ նկատելի էին նաև Բայազետում տեղակայված Ջավիդ բեյի թուրքական Կովկասյան 11-րդ դիվիզիայի կարևոր

դերի առնչությամբ³³:

Ա.Խատիսյանի, Ռուբեն Տեր-Մինասյանի, Վ.Հասկելի հետ սեպտեմբերի 6-14-ին Նախիջևանի շուրջ Թիֆլիսում ընթացած բանակցությունների ժամանակ այս շրջանի և Հայաստանի հարավային այլ մասերի թաթար պատգամավորները իրենց անվանակոչեցին «Հարավարևմտյան Ադրբեջանի» ներկայացուցիչներ ու հուշագիր հանձնեցին ամերիկացուն³⁴: Նրանք խնդրում էին չհեռացնել Բաքվի իշխանությունը բազմաթիվ հայկական շրջաններից: Բաքվի ղեկավարությունը ևս Դաշնակիցներին է հղել ՀՀ-ի դեմ ուղղված մեղադրական ռադիոգրեր:

Երևանի իշխանությունները իրենց պատասխան հայտարարությամբ նկարագրել են թուրք ու թաթար գործակալների գործունեությունը Հայաստանում³⁵: Նշվում էին, ի // -222 միջի այլոց Մուդրոսի գինադարից մինչև Նախիջևանի նահանգապետության առթիվ պայմանավորվածության, այնուհետև 1919թ. նոյեմբերի 23-ի երկկողմանի պայմանագրի բոլոր պարտականությունների զանցառումը:

Սեպտեմբերյան գործողումից հետո վարչապետ Ա.Խատիսյանն ու Ռ.Տեր-Մինասյանը տուն են բերել Վ.Հասկելի 9 կետից բաղկացած մի ծրագիր, որտեղ դաշնակիցների Գերագույն հանձնակատարը հաստատում էր Ջանգեզուրի և Դարալագյազի` Հայաստանին պատկանելիության փաստը: Ծրագիրը վավերացրել էր «Ամերիկյան գեներալ-նահանգապետություն» եզրույթը և ընդունեց երկաթուղին կառուցելու նախագիծը որպես ՀՀ եւ ԱՀ-ի միջև առանձին համաձայնագրի առարկա: Գիշտ է, հողային թվացյալ «գիջումների» դիմաց Բաքուն պահանջեց նրան հանձնել Գողթնը (Օրդուբադը` հինավուրց Որդվատը): Այս տեղամասը ցանկանում էին անջատել նահանգապետությունից ու հնազանդեցնել Ադրբեջանին: Վ.Հասկելի մերժումից հետո, հոկտեմբերի 6-ին արտգործնախարար Մ.Ջաֆարովը ադրբեջանական կառավարության անունից նրան հայտնեց ամերիկյան նահանգապետությունը ընդունելու մասին: Իրականում Բաքվի իշխանությունները գերադասել են չսրել անմիջական հարաբերություններ և իրենց դիմադրությունը տեղափոխել ավելի ցածր` զանգվածային շերտի:

Պաշտոնական վավերագիրը ձեռքին` Վ.Հասկելը նույն ամսի 7-ին մեկնել է Փարիզ, որպեսզի այնտեղ հայցի զորքերի հատկացում և իր լիազորութիւնների ընդլայնում ամբողջ Անդրկովկասի վրա: Նրա շտաբի պետը` Գերագույն հանձնակատարի պաշտոնատար գնդապետ Ջ.

³³ Օրինակ, նրա շտաբի պետի հեղինակած հուշերի գրքույկում` Veysel Ünüvar, İstiklâl Harbinde Bolşeviklerle Sekiz Ay, 1920-1921, İstanbul, Y.Y., 1948; նաև K.Karabekir, s.413-414:

³⁴ Վ.Հասկելի 1.09.1919-ի առաջարկությունները տե՛ս` ՀԱԱ, ֆ.275, ց.5, գ.183, ք.21-22: Հայկական 6.09.1919-ի հակաառաջարկը` նույն տեղում, ք.8-9 դարձ.: Տե՛ս նաեւ` ք.38-39: Թաթարների 9.09.1919-ի հուշագրի մասին տե՛ս` Ս.Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Հայաստան, 1993, էջ 324: Նաև` Է.Ա.Ջոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը, էջ 207:

³⁵ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.44, ք.107:

Ռիան, պետք է հաստատեր իր հայրենակցին գնդապետ Է.Լ.Դելիին գեներալ-նահանգապետի պաշտոնում: Գործը ի կատար ածելու նպատակով նա ժամանել է Երևան ու 1919թ. հոկտեմբերի 23-ին Վ.Հասկելի անունից, իշխանություններին դեմ տվել «Հայտարարություն՝ Շարուր-Նեխիջևանի ամերիկյան նահանգապետությունը ստեղծելու մասին»³⁶: Վավերագրում նշվում էր, որ երկու հանրապետությունները «համաձայնել են հավատարմությամբ սատարել» նոր վարչակարգին՝ հաշվի առնելով տվեալ որոշումը «հայկական և ադրբեջանական կառավարությունների համաձայնությամբ և աջակցութեամբ» կայացնելու իրողությունը³⁷: //-223

Հոկտեմբերի 24-ին ԱՄՆ-ի բանակի շտաբի հինգ սպաներ, Ջ.Ռիան և Է.Դելին Երևանից տեղափոխվել են շրջանի կենտրոն, որտեղ նրանց դիմավորել են թուրքական ու ադրբեջանական դրոշներով: Տեղի պարագլուխները հյուրերին ուղարկել են ՄԱԽ, իսկ խալիլ բեյը հայտարարել է, թե ինքը թույլ չի տա հաստատել հսկողության նման գոտի: Խալիլը ինքնուրույն էր այնտեղ ապահովում կարգ ու կանոն, ուստի Է.Դելին կարող էր հանդիսանալ լոկ Փարիզի Կոնֆերանսի ներկայացուցիչ: Երկու օրում ամերիկացիները երկու անգամ հրապարակալ ընթերցել են Հայտարարությունը և ապարդյուն ճգնել հրատարակել այն: ՄԱԽ-ի անդամները պնդում էին իրենց տեսակետի վրա, անգամ եթե Բաքվից ենթարկվելու հրաման գար: Այսպես, հոկտեմբերի 29-ին Ջ. Ռիան վերադարձել է Երևան, իսկ Է.Դելին մնացել է նպաստներ բաշխելու և բարոյական ազդեցություն գործելու համար: Հինգ սպաներից մեկը՝ փոխգնդապետ Ջ.Շելին գործուղվել է Դավալու և ստանձնել զինադադարի կատարման գծով հսկիչի դերը:

Վ.Հասկելի ծրագիրը տապալելուց հետո տեղական ուժերը անմիջապես անցան Է.Դելիի հետ հարաբերությունների լավացման³⁸:

Մարտեր Ջանգեզուրում, Գողթան կործանումը:

Միևնույն ժամանակ Նախիջևանում տնավորված զինուժը անցել է Ջանգեզուրի վրա երկու կողմից լայնածավալ հարձակման: Նպատակադրվելով բացել գավառի կենտրոնական մասը տանող լառնանցքները՝ թուրք սպաների հրամանով շարժվող զորասյուները ճգնեցին

³⁶ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.212, ք.186-188: Բաքվի իշխանությունների համաձայնությունը նշվում է՝ US NA, RG 256, 184.021/309-310/f.1, M820 General Records of the American Commission to Negotiate Peace, 1918-1931, American Delegation, Field Mission of the American Delegation, Harbord Military Mission to Armenia, Roll 232. Microfilm publications, Wash., NA and RS, General Services Administration, 1970, պահվում է՝ ՀԱԱ, ժհ 4; նաև՝ Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг. Сост. и пер. с англ. Г. Г. Махмурия, Ереван, Ин-т истории НАН РА, 2012, с.260, 262: Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, Գիտություն, 2000, էջ 134-135-ում նշվում է հոկտեմբերի 25-ը: Առաջին անսաթվի ճշգրտությունը հաստատում են ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.395, ք.5; նաև՝ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ., էջ 139:

³⁷ ՀԱԱ, ֆ.կ.1021, ց.2, գ.964, ք.129:

³⁸ R.Hovannisian, op.cit., p.204-205.

գրավել Լեռնային Գողթունը: Սակայն նրանց ներխուժումը կասեցվեց: Ջանգեզուրցիների՝ Ա.Շահնազյանի գլխավորությամբ նոյեմբերի 4-12-ին տարած փայլուն հաղթանակի շնորհիվ, Բաքվի իշխանությունները զիջեցին Ջ.Ռիայի միջնորդական խիստ ճնշմանն ու 1919թ. նոյեմբերի 23-ին Թիֆլիսում կնքեցին հայ-ադրբեջանական չհարձակման համաձայնագիր: Երկու վարչապետները՝ Գերագույն հանձնակատարի պաշտոնատարի և Վրաստանի արտգործնախարարի ներկայությամբ, պարտավորվել են անգեն եղանակով կարգավորել բոլոր հարցերը³⁹: Այնուամենայնիվ, նույն ամսի 25-ի դրությամբ 4.000 նախիջևանցի թաթարներ հարձակվել են Սիսիանի հայկական գյուղերի վրա, բայց գլխովին ջախջախվել: Չորս օր հետո Բաքվի իշխանությունները մեղադրել են ՀՀ-ն Դարալագյազի հնարած, //-224 քարտեզներում երբևիցե չգրանցված մահմեդական 9 գյուղի կործանման մեջ⁴⁰:

Այդ ամենի կողքին Գողթան վերջին 20.000 հայեր դարձել են Ջանգեզուրի համար հետագա մարտերի պատանդ: Նրանք զոհ են գնացել Ջանգեզուրից փախած ու տեղական թաթարների վայրագություններից: Խաժանուժը հատկապես դաժան էր Գողթան հարավային մասում՝ Ագուլիսով հանդերձ, որտեղ բնակիչները զինաթափվել ու հոժարակամ հանձնվել էին թաթարներին: Դեկտեմբերի 17-18-ին կողոպտվել, իսկ դեկտեմբերի 24-25-ին հիմնահատակ կործանվել է Դաշտը (Ներքին Ագուլիսը): Ամսի 25-ին նույն բախտին է ենթարկվել մեծ ու հին Վերին Ագուլիսը: Օրդուբադի պարետ, թուրքական կապիտան Էդիֆ բեյը (պաշտոնավարում էր 1918-ի օսմանյան ռազմագրավումից ի վեր) դեկտեմբերի 19-ին այցելել է ագուլիսցիներին՝ խոստանալով Բայազետից ստորաբաժանումներ կանչել կամ դժբախտ բազմությանը Արաքսի վրայով ուղեկցել Պարսկաստան: Իրականում նույն ամսի 24-ին ոստիկանությունը տներից դուրս է վճռում մարդկանց ու նրանց հանձնում ջարդարարների հոշոտման: Արդյունքում Դաշտի փողոցներում տանջամահ են եղել 400, Վերին Ագուլիսում՝ հազար հոգուց ավելի: Միաժամանակ ադրբեջանցիները դեկտեմբերի 30-ին հայտագիր են ներկայացրել Վ.Հասկելին՝ հայերի Ջանգեզուրում վարած մարտերի հաղթական ընթացքի դեմ:

Նկատի ունենալով Սյունիքի անառիկ մնալը՝ Անդրկովկասի երեք արտգործնախարարները՝ Ա.Խատիսյանի մասնակցությամբ, 1920-ի հունվարի 22-ին Թիֆլիսում ստորագրել են համաձայնագիր: Նրանք ճանաչել են միմյանց անկախությունն ու բոլորին պարտադիր իրավա-

³⁹ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.282, ք.35-36; նաև՝ US NA, RG 59, 860J.01/180/Encl.7, T1192 Records of the Department of State Relating to Internal Affairs of Armenia, 1910-1929, Roll 2, Microfilm publications, Wash., NA and RS, General Services Administration, 1975, ՀԱԱ, ժհ 38: Հրապարակվել է Нагорный Карабах в 1918-1923 гг., Сб. док. и мат., под ред. В.А.Микаеляна, Ереван, АН Армения, 1992, с.352-353; նաև՝ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ., էջ 140-141:

⁴⁰ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, ք.389-390; նաև՝ «Слово», 5.12.1919; նաև՝ Յ.Դուլյան, էջ 120:

րարությունը՝ վիճելի տարածքների նկատմամբ⁴¹: Բանակցությունների ժամանակ, սակայն, Ադրբեջանը անդադար մարտեր էր վարում թուրքերի նման: Խաղաղության փոխարեն նա ռազման աշխուժությամբ էր անրացնում «դիվանագետների» դիրքերը: Այսպես որ անդորրը կարճատև էր:

1920թ. փետրվար-մարտ ամիսներին երկաթգծով Բայազետից՝ Մակվի վրայով Նախիջևան են փոխադրել 200 ասկյար: Սեղմ ժամկետներում Ջուլֆայից մինչև Դավալու բոլոր կարևոր վայրերում տեղակայել են երեք, այնուհետև՝ թուրքական յոթ կանոնավոր զումարտակ: Շարուրում հրամայում էր կրտսեր //-225 լեյտենանտ Նաջին, Օրդուբադում՝ նրա աստիճանակից էդիբը, Նախիջևանում՝ լեյտենանտ Օսման Նուրին: Խալիլ բեյը մինչև հունիսը ամբողջ գավառի բոլոր հրոսակների հրամանատարն էր, հետո նրան փոխարինել է մայոր Ալի Դեմիրը⁴²:

Այդ ուժերի դեմ կռիվների հերթական ալիքը թափ է արել մարտ ամսի կեսից: Հայաստանի Հանրապետության բանակը կարճ ժամանակով թափանցել է Վերին Ագուլիս, բայց ստիպված էր անցնել Կապան՝ նոր վայրում իր հաղոջությունը զարգացնելու:

Նախիջևանը Ադրբեջանի խորհրդայնացման ազդեցության ներքո և ՀՀ - Խորհրդային բանակցությունները:

Ադրբեջանի բուլշևիկներին արագ անձնատուր լինելը ապրիլի վերջին, խորհրդա-թուրքական սերտ դաշինքի գրավական դարձավ՝ ձևափոխելով տարածքային հակամարտության պատկերը: Օսմանյան նախկին զորավար, այժմ քենալականների զինակից Նուրի փաշա Ջելալն⁴³ ու մուսավաթական զորքի մի քանի հազար զինյալներ հաշված օրերում անարգել անցան Նախիջևան: Մայիսին որպես տեսուչ գավառ է այցելել թուրքական 11-րդ դիվիզիայի շտաբի պետ⁴⁴: Մյուս կողմից, թատերաբեմի նոր դերակատար բուլշևիկների 11-րդ Կարմիր բանակը 1920թ. մայիսի 11-ին ստացել է առաջ գնալու և Շարուր-Նախիջևան-Օրդուբադը գրավելու հրաման: Երկու շաբաթ անց նրա ղեկավարները բողոքել են երկաթուղով մեկ ծավալված մահմեդականների համառ դիմադրության համար ու խնդրել ճնշամիջոցների դիմելու թույլտվություն:

Հունիսի կեսին Լևոն Շանթի դիվանագիտական առաքելությունն իր բանակցություններ է սկսում Մոսկվայում: Սկզբից Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդը միասնական «փաթեթով» է շաղկապել Ղարաբաղ-Ջանգեզուր-Նախիջևանն ու Հայաստանն է ճանաչել այս ամբողջ երկրամասի գերիշխանը: Ղարաբաղում պետք է անցկաց-

⁴¹ "Near East News," Tiflis, 3.02.1920, p.4.

⁴² R.Hovannisian, The Republic of Armenia, vol.III From London to Sèvres, February - August, 1920, Berkeley & Los Angeles, University of California Press, 1996, p.291, 307-308.

⁴³ Ռազմական նախարար Էնվերի եղբայր, Իսլամի բանակի հրամանատար Նուրին 1918թ. սեպտեմբերին գրավեց Բաքուն և այն հանձնեց անդրկովկասյան Ադրբեջանին:

⁴⁴ V.Ünüvar, s.8-10, 17.

վեր հանրաքվե, բայց մյուս երկու գավառները անվերապահորեն անցնեին ՀՀ-ի վարչության ներքո: Այնուամենայնիվ, հունիսի վերջին ինքնորոշման հենակետային սկզբունքը Մոսկվայում փոխարինվել է ռազմաքաղաքական նպատակներով, այդ թվում՝ նոր իշխանությունը ծավալելու խնդրով: Ղարաբաղն ու Ջանգեզուրը //-226 իրենց հայկական հստակ նկարագրով, ազգային ճնշող մեծամասնությամբ ու ներքին ինքնավարությամբ մատնում են լռության կամ վիճելի են որակվել: Թեև այդ երկու շրջաններում նախատեսված հանրաքվեի արդյունքը կասկածի տեղ չէր թողնում, անդին Նախիջևանը, որտեղ 1918-1919թթ. ցեղասպանության հետևանքով թուրք-թաթարական եղեռնից հետո հայերը թվային մեծամասնություն չունեին, Ռուսաստանը ընդունում էր որպես Հայաստանի միավոր: Ի տարբերություն անգլիացիների՝ բուլշևիկները չէին մեջբերում տնտեսական գործոնը: Սա հասկանալի է. Առևտրաարդյունաբերական կապերը քաղաքական հնազանդություն հիրավի չեն պահանջում. բավական է փոխադարձ օգուտը: Այդպես որ բուլշևիկների առաջնորդները՝ Սերգո Օրջոնիկիձեից, Իոսիֆ Ստալինից ու Վլադիմիր Լենինից սկսած, որոնք հսկում ու ձևավորում էին ՀՀ հետ բանակցությունները, մի կողմ են դրել ժողովրդավարական ինքնորոշումն ու անցել նպատակահարմարության սկզբունքի:

Քննարկման առաջին փուլում Գեորգի Չիչերինը նկատելիորեն ուժեղացնում էր ՀՀ-ի դիրքերը Արևելյան Հայաստանում, թեև նրա արևմտյան նահանգներից հրաժարվելու գնով: Չէ՞ որ կոմիսարը պետք է Թուրքիային հատուցեր Ադրբեջանի անարյուն խորհրդայնացման համար: Սակայն, բուլշևիկյան պայմանները վատթարանում էին հայ պատվիրակների հետ հանդիպումներում, թեև Երևանի պատգամավորներն անտեսում էին այդ միտումը: Բոլոր հանգամանքներով հանդերձ, մոսկովյան բանավեճի ժամանակ միշտ հաստատվում էր Նախիջևանի պատկանելիությունը Հայաստանին: Հունիսի 29-ին Գ.Չիչերինը հուշագիր է հղել խորհրդային կառավարության ղեկավար Լենինին: Նա, բողոքելով Բաքվի՝ Ղարաբաղը, Ջանգեզուրը, Շարուր-Ռարալագյազը ընդգրկող Նախիջևանը, Օրդուբադով ու Ջուլֆայով պահանջելու դեմ, նշել է այս հողերի առավելապես հայկական հսկողության տակ լինելու և Հայաստանի մաս հանդիսանալու մասին: Գ.Չիչերինը դժգոհել է, որ Բաքուն բանեցնում էր Կարմիր բանակի ուժը վերոնշյալ շրջանները ձեռք բերելու նպատակով:

Միևնույն օրը արտգործկոմիսարը հեռագրել է Համո Օհանջանյանի կառավարությանը, տեղյակ պահել Բ.Լեգրանին Երևան գործուղելու ու այնտեղ պայմանագիր կապելու վերջերս //-227 կայացած որոշման մասին: Բանակցային տեղի փոփոխումը վկայում էր նախորդ քննարկումների վիժեցման ու հայ դիւանագետների համար բարդ և աննպաստ պայմաններում կրած պարտության մասին: Դրա հետ մեկտեղ՝

Նախիջևանը շարունակ ճանաչում էին որպես հայկական գավառ⁴⁵: Իսկ Կարմիր զորքերը նույն պահին շփման մեջ են մտել զանգեզուր-ցիների հետ Տեղ գյուղում: Ընդ որում, գուղացիները զգուշացրել էին որ կապաշտպանվեն:

1920թ. հուլիսի 5-ին և 8-ին Խորհրդային Ադրբեջանն ու ՂՂ-ն մեղադրական հայտագրեր են փոխանակել: ՂՂ-ն հանձնարանն ոչ միայն պարսավել է թուրքական միջամտությունն, այլև Շարուր-Նախիջևանը անվանել իր հայրենիքի անքակտելի մաս: Ինքը գրել է, որ նախընթաց ամիսներին հատկապես Խորհրդային ազերի ստորաբաժանումները ներ-խուժեցին Իջևան, Շամշադին: Ինքը քաշվելու պահին նրանք քանդել են գյուղերը, գերի բռնել կամ սպանել պաշտոնյաներին: Հայտագրից քիչ առաջ՝ հուլիսի 1-ին, թուրքական 11-րդ դիվիզիայի հրամանատար Ջավիդ բեյը Շահթախտ է ուղարկել իր 34-րդ գնդի առաջին գումարտակը, իսկ մայրը Վեյսելը երկրորդ տեսչական շրջագայությունն է կատարել Նախիջևանում: Նա իր հետ է բերել հետևակի երեք գումարտակ, հրանոթային մարտկոց ու սպաներ: Այդ ուժին դիմակայելու և ՂՂ պետական իշխանությունը ամրապնդելու նպատակով, 20 հետևակային վաշտից, 7 հեծելավաշտից, մարտկոցներից ու գնդաձրային անձնակազմից բաղկացած զորավար Գ.Շելկովնիկյանի ջոկատը 1920թ. հուլիսի 11-ին մոտեցել է 1419 մ. բարձրություն ունեցող, Վեդի ավանից հյուսիս-արևմտյան կողմում առկա Երախ գագաթին⁴⁶: Նրանց դիմավորել են թուրք-թաթարական ստորաբաժանումները⁴⁷:

Նախիջևանը՝ միջազգային տարանցման ճանապարհի բաղադրիչ:

Հուլիսի 12-ին Գ.Շելկովնիկյանի վերոյիշեալ ջոկատը իր հսկողության տակ առավ Վեդին, Դավալուն⁴⁸ ու Սադարակը, իսկ Արարատ կայանում պատրաստ զրահապատ գնացկը մեկնեց հարավ: Իրավիճակից ելնելով՝ Երզրումի թուրքական շտաբը հրավիրել է Կարմիր բանակը Արաքսի հովտում միանալ քենալական զորքերին ու փրկել «Կարմիր Նախիջևանը» «դաշնակների առաջխաղացումից»: Հայ-ռուսական պայմանագրի բացակայության կամ թուրքիա ուղղված ռուսական // -228 տարանցմանը հարուցած հայերի արգելքը՝ բոլշևիկ-քենալական կապերի Երևանի համար բոլոր վտանգներով հանդերձ, ՂՂ դիվանագետների և ղեկավարության կոպիտ սխալ էր: Առաջին՝ երկու երկիրներն ընդհանուր ծով ունեին ու մեծ նավահանգիստներ: Երկրորդ՝ ՂՂ-ի «չեզոք» դիրքն և որևէ կողմին չմիանալու գիծը ՂՂ-ն դարձնում էր նրանց մերձեցման համար պարարտ հող կամ երկուսի համար

⁴⁵ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.581, թ.117 եւ գ.607, թ.4: 1920թ. հուլիսի 1-ին Լ.Շանթը անստույգ զեկուցեց իր կառավարությանը, թե հայկական բոլոր երեք շրջանները, անխտիր, դիտարկվում էին որպես վիճելի:

⁴⁶ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.2, Երևան, ԵՊՀ, 1988, էջ 210:

⁴⁷ R.Hovannisian, op.cit., p.310.

⁴⁸ Այժմ Արարատը:

շատ հարմար որս: Բուլշևկյան Ռուսաստանն ու քենալական թուրքիան հարկավոր էին միմյանց ու կարիք ունէին քաղաքական համաձայնութեան: ԶԶ-ն կարող էր ու պետք է ուղղեր նրանց ցամաքային տարանցունը քաղաքականա-պես նվազ վտանգավոր Կարսի երկաթուղու վրայով: Սակայն Լ.Շանթի՝ մոսկովյան պայմաններին չհաշտվելու հետևանքով, նրա երկիրը չկարողացավ ազդել վերոնշյալ պետությունների այն մերձեցման վրա, որը կանխարգելելու միջոցներ չուներ:

Հիրավի, ռուս-թուրքական համագործակցությունը ուներ երկու հնարավոր երթուղի. ԶԶ-ի և Վրաստանի վրայով՝ Սարիղամիշ-Կարս-Ալեքսանդրապոլ գծով, ու Հայաստանի վրայով՝ Նախիջևան-Ջանգեզուր-Արցախի միջողով: Առաջին ճանապարհը շահավետ էր Ռուսաստանի համար և զուրկ քաղաքական վնասից: Երկրորդը հրապուրիչ էր թուրքիայի համար, քանի որ Ռուսաստանից բացի, առաջարկում էր Բաքուն և ամբողջ Միջին Ասիա տանող ճանապարհը⁴⁹: Բաքուն Ռուսաստանին ենթարկելու միջոցով թուրքիան բարձրացնում էր «խաղաղ եղանակով միացած» իր կամակատարի դերն և ամեն ինչ անում Հայաստանին ոչբարեկամ և միանգամայն գրավված երկիր դարձնելու համար: Այնուհետև Մոսկվան և Անգորան սահմանում էին նրանց շփման հստակ կետը: Բուլշևիկները ընդլայնում էին նրանց ազդեցության ոլորտն ու տեղափոխում կցակետը դեպի հարավ-արևմուտք՝ նրանց հնազանդ, թելուզ առժամանակ ոչ-խորհրդային Հայաստանի պայմանով: Իսկ Անգորան տեղափոխում էր կցակետը դեպի հյուսիս-արևելք՝ արդեն խորհրդայնացված Ադրբեջանի հյուսիսային սահմանին:

Ընդ որում, բուլշևիկները բարեկամական դիվանագիտություն էին իրականացնում իրենց կենտրոնում, սակայն տեղում 11-րդ Կարմիր բանակը զենքի ուժով իրեն էր ենթարկում ԶԶ շրջանները⁵⁰: Դիվանագիտական և իրական վարմունքի նման ծուլվածքը դրդում էր Երևանի դահլիճին պատվով վերադառնալ ռուսական // -229 ոլորտ կամ առնվազն երաշխիքներով գործարքի մեջ մտնել ու թույլ տալ անկասելի տարանցունը: Լ.Շանթի պատվիրակությունը զիջումներին չէր գնում, ուստի Գ.Չիչերինը առաջարկել էր չսահմանել երեք կարևոր շրջանների պետական պատկանելիությունը, այլ նրանք պահել զինվորական ղեկավարման տակ, մինչև դրությունը բարելավվի: Լենինն և Ստալինը ընդդիմանում էին կիսամիջոցներին: Նրանց կարծիքով՝ Ռուսաստանի երկրամասում կրկին հաստատվելու խնդիրը ՌՍՖՍՀ-ն կանգնեցնում էր մի ընտրության առաջ: Մեկ կողմից՝ ԶԶ և մյուս կողմից՝ խորհրդային Ադրբեջանի և «պեղափոխական, դաշնակցային» թուրքիայի միջև:

⁴⁹ K.Karabekir, s.844-845; նաև՝ Բ.Լեգրանի 1920թ. սեպտեմբերի 23-ի նամակը Գ.Չիչերինին ու Լենինին՝ Геноцид армян: Ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарии, в 2 т., Ред. и сост.Я.Г.Барсегов, т.2, ч.1, М., Гардарика, 2003, с.356:

⁵⁰ Հար և նման դիտողությունը տես՝ Է.Ա.Չոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը, էջ 48, 99:

Թէև՝ նման նկատառումներով հանդերձ, Մոսկվան հաշվի էր առնում Հայկական հարցի միջազգային բնույթ ու Թուրքիայի փոխյան մնալու փաստը: Խորհրդային կառավարությունը առայժմ զսպում էր իր զինվորականների եռանդն և ի վերջո 1920թ. օգոստոսի 10-ին՝ Սևրի դաշնագրի հետ նույն օրը, կնքեց խորհրդա-հայկական համաձայնագիրը: Այն վերապահում էր Կարմիր բանակի Նախիջևան մտնելու կարելիությունը⁵¹:

Մեկ կարևոր հանգամանք ևս. 1920-ի ամռանը ՀՀ բանակը իր մարտունակությունն է ցույց տվել հատկապես Նախիջևանի գաւառում՝ կանոնավոր թուրքական զորքերի դեմ կռվելիս: Սակայն այդ հաջողությունը հարկավոր էր զարգացնել միջազգային բարդ պայմաններում: Նման ենթաթեքստում քեմալականները հաջողությամբ տարան իրենց խաղը ոչ միայն ՀՀ պետական գործիչների, այլև Խորհրդային Ռուսաստանի առաջնորդների նկատմամբ: Հայ դիվանագետների հիմնական թուլությունը ժամանակից ու նոր իրադրությունից հետ մնալու մեջ էր: Նրանց չէր հաջողվում ճիշտ գնահատել ու կանխել իրադարձությունների զարգացումը, մեղմացնել իրենց կողմից անվերահսկելի գործընթացները կամ օգտվել դրանցից, ի տարբերություն Երզրումի և Բայազետի քեմալական հրամանատարության, որ բոլշևիկներին բերելով իրեն հարկավոր երթևեկով՝ կարողացան ընդհարում առաջացնել Կարմիր բանակի և ՀՀ զորքերի միջև:

ՀՀ բանակի 1920թ. ամռան ազատարար արշավը:

ՀՀ բանակի Ղամարլուի ջոկատը 1920թ. հուլիսի 14-ին անցնելով Շարուրը՝ Գայլեդրունքի միջով ու Շարուրի համահավաք ջոկատի կազմով մտնում է Նախիջևան: ՀՀ զինվորները մարտչում էին //230 թուրքական կանոնավոր ստորաբաժանումների՝ 18-րդ ու 34-րդ գնդերի դեմ: Վերջինները, իրենց պահեստային ուժով ու զինվածությամբ հանդերձ, չնայած իրենց քաղաքական, ռազմադիվանագիտական նվաճումների, այդ իսկ օրը փախուստ են տալիս քաղաքացիական բնակչության հետ միասին: Թաթար փախստականների նոր ալիքը սկիզբ է արել Վեդիից, կլանել Շարուր և Նախջիևանի 60 գյուղերը, հասել Շահթախտի կամուրջը եւ, զանգվածաբար ու խուճապահար գետը կտրելով, անցնում էր Պարսկաստան: Նախիջևանում տեղակայված թուրքական զորամասերը Բայազետից հրաման են ստացել հետ քաշվել՝ կամուրջին, քաղաքացիական բնակչության հեռացումը ապահովելու համար⁵², միաժամանակ՝ Ալի Դեմիրին կարգադրել տեղական ոստիկանությամբ պաշտպանել Նախիջևան, Ջուլֆա և Օրդուբադ քաղաքները, եթե դա հնարավոր լինի: Տեղական մահմեդական խորհուրդը, իր հերթին, ՀՀ բանակից հայցեց զինադադար ու բանակցություններ:

⁵¹ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.529, թ.70:

⁵² V.Ünüvar, s.27-30.

1920թ. հուլիսի 16-ին⁵³ Գ.Շելկովնիկյանի ստորաբաժանումները կանգ են արել: Այդ երևույթի պարբերական բնույթը՝ երբ հայկական զորքերը ընդհատում են իրենց առաջխաղացումը ոչ թե իրենց որոշումով, այլ արտաքին ճնշման արդյունքում, մեկնաբանություն է պահանջում: Նրանց հակառակորդը՝ թուրքերն և ադրբեջանցիները, ստում ու ժամանակ էին ձգում, որպեսզի աննկատ քայլեր անեն, իսկ հետո դիմացինին դնեն կատարված փաստի արջև: Պարտության պարագային անգամ հակառակորդը վերախմբավորում էր ուժերը, սպանում, թալանում՝ մեծ կարևորություն հաղորդելով հարստացմանն ու ժողովրդագրական պատկերին: Երբ թշնամուն անհնար էր հաղթել միագամից, նա աշխատում էր առավելագույնս հայության վնասել: ՀՀ բանակի՝ դիվա-նագիտության ու պարկեշտության ավելորդ հակումը քիչ օգուտ էր բերում, քանի որ զիջողական վարմունքը սովորաբար ընկալվում էր որպես ներքին թուլություն կամ ինքնուրույնության բացակայություն: Թշնամու խնդրանքը ինքնըստինքյան բավական էր կասկածելու զինադադարի ցանկալիության վրա:

Նախիջևանի ճանաչումը ՀՀ կազմում:

Այնուամենայնիվ, Նախիջևանի ՄԱԽ-ի պատգամավորները //-231 ժամանեցին Երևան, որտեղ ռազմական նախարար Ռ.Տե-Մինասյանը ու նրա տեղակալ Հ.Հախվերդյանը 24 ժամ են տրամադրել խաղաղության պայմաններն կշռադատելու համար: Նրանք ՄԱԽ-ից պահանջել են ճանաչել Շարուր-Նախիջևանը որպես Հայաստանի անբաժան մաս, իսկույն զինաթափել բոլոր զինյալ ուժերը, վերականգնել 1919-ին գրաված ունեցվածքն ու սեփականությունը, հանձնել առնվազն 10.000 հրացան՝ յուրաքանչյուրը 100 պամփուշտով, ամբողջ հրետանին, ինչպես և 150.000 փութ (2.078 տոննա) ցորեն, վաճառել կառավարությանը ևս 150.000 փութ հացահատիկ, նաև 300 ձի ու 200 գլուխ լծկան անասուն, ապահովել իրենց իսկ քանդած երկաթուղու նորոգումը: Այդ ամենի դիմաց հաշտված կողմը ստանում էր կրոնական-մշակութային ինքնավարություն, տեղական իր վարչությունը, Խորտրդարանում իր պատգամավորներին: Նա կարող էր դատվել շարիաթի կանոններով՝ փոխադարձ համաձայնության դեպքում⁵⁴:

⁵³ Ինչպես դա արել է Անդրանիկը 1918թ. դեկտեմբերի 2-ին Արցախում ու ՀՀ բանակը՝ 1919թ. փետրվարի 8-ին Նախիջևանի հյուսիսում, Դ.Կանայանի ջոկատը 1920 թ. մայիսի 27-ին Վարանդայում ու հուլիսի 5-ին Գորիսում, նրա հետևյալ նահանջով հանդերձ:

⁵⁴ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.484, ք.26-26 դարձ. նաև՝ Ս.Վրացյան, էջ 455; նաև՝ Է.Ա.Զոհրաբյան, Նախիջևանի հիմնահարցը (1920-1921), էջ 67-68: Դատելով ժամանակագրական տվյալներից՝ խաղաղության պայմանները հանձնել են 1920թ. հուլիսի 18-ին ու 27-ին: Վարչապետի՝ ՀՀ Խորտրդարանին Օգոստոսի 2-ին ներկայացված զեկուցումը տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի միստերի արձանագրություններ 1918-1920թթ.: Երևան, Հայաստանի Ազգային արխիվ, 2010, էջ 521-522: Մեր տրամադրության տակ արխիվային վավերագրերից ավելի խիստ պայմաններ, այդ թվում երկաթուղու երկայնությամբ մահ-

Հուլիսի 20-ին ՄԱԽ-ը ճանաչել է Գայլեդրուքից Ջուլֆա սփռված Շարուր-Նախիջևանը ՀՀ կազմում՝ իր զանգվածի ներքին լիակատար ինքնավարությամբ հանդերձ: Ժամանակ շահելու համար, պատգամավորները տուն են մեկնել, եւ արդէն գաւարի կենտրոնից ՀՀ դահլիճը իրազեկել, թէ պատրաստ են վերսկսել երևանյան բանակցությունները՝ Դաշնակիցներից մեկի ղեկավարության ներքո⁵⁵: Վերջնական պատասխանի բացակայության պայմաններում հայկական զրահագնացքը հուլիսի 23-ին վերսկսել է առաջխաղացումը, իսկ թուրքական զորքերը հետ են կանչվել Ջուլֆայից և Օրդուբադից Շահթախտ, անցել Պարսկաստան: Ամսի 24-ին երկաթգծի և խճուղու երկայնությամբ սկսվել է հայկական 2000-անոց հետևակի գլխավոր հարձակումը: Հուլիսի 25-ին ազատագրվել է Շահթախտը (Արքաշատն), ու ՀՀ բանակը դիրքավորվել է գավառի կենտրոնից 27 կմ հեռու: Նախիջևան քաղաքի հազարավոր բնակիչները փախան, իսկ ՄԱԽ-ը շտապ ձևափոխվեց տեղական հեղափոխական կոմիտեի: Նրա պարագլուխները դիմեցին Խորհրդային Ադրբեջանին ու Կարմիր բանակին՝ վերջինին հրավիրելով զավթակալել մահմեդականներից պարավոլ շրջանը: «Հեղկոմը» միաժամանակ դիմել է ՀՀ զինուժին՝ առաջարկելով կազմակերպել Նախիջևան-նի խաղաղ հանձնումը:

Նրանք նորից ժամանել են Երևան, որտեղ ամսի 27-ին ՀՀ //-232 վարչապետ Հ.Օհանջանյանի վկայությամբ, ճիշտ նույն պահանջներն են ներկայացրել: Հետո այդ անձանց հասցրել են շրջան, սակայն այժմ՝ հուլիսի 30-ին, մահմեդականները իրենք են վերջնագրով պատասխանել ՀՀ-ին⁵⁶: Չէ՞ որ երկու օր առաջ 11-րդ Կարմիր բանակի երկու հեծելավաշտ՝ իրենց գնդացիներով ու մարտկոցով, իջել են Նախիջևանի խճուղի՝ քաղաքի մոտ: Նրանց հետևել են Խալիլ փաշա Քուլթն⁵⁷ ու քենալականների համար առաջին 407,5 կգ ոսկով բեռնված խորհրդային առաքելությունը⁵⁸: Խալիլի և առաքելության ժամանման արդյունքում 1920թ. հուլիսի 30-ին գնդապետ Ու.Տարխտվը դիմել է Շահթախտում տեղեկայված հայ հրամանատարներին որպես՝ «Նախիջևանի և նրա շրջակայքի ռազմագրված ՌՍՖՍՀ ու կարմիր թուրքիայի միացյալ զորքերի հրամանատար»: Ինքը գրել է. «Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության Կարմիր բանակն ու կարմիր թուրքիայի դաշնակից զորքերը հրամանը կատարելիս 1920թ.

մեդական գյուղերը թողնելու պահանջը՝ տե՛ս R.Hovannisian, The Republic of Armenia, vol. III, p.314:

⁵⁵ V.Ünüvar, s.31-32.

⁵⁶ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.468, ք.33-33 դարձ.: «Նախիջևանի հեղկոմի շրջաբերականը» ՀՀ վարչապետին ուղարկվել է 1920թ. օգոստոսի 1-ին (տե՛ս նաև՝ Նախիջևան-Շարուրը 1918-1921թթ., էջ 267-268; նաև՝ Է.Ա.Զոհրաբյան, Նախիջևանի հիմնահարցը 1920-1921, էջ 96):

⁵⁷ Օսմանյան 6-րդ բանակի նախկին հրամանատար և 1915-1918թթ.՝ հայերի ցեղասպանությունը իրականացնելու համար ձևավորված երիտթուրքերի հատուկ կազմակերպության տնօրինության անդամ:

⁵⁸ V.Ünüvar, s.44.

հուլիսի 28-ին մտել են Նախիջևանն ու նրա շրջակայքը՝ առանց Հայաստանի դեմ թշնամական գործողություններ կատարելու նպատակի:

Մեր ստացած վստահելի տեղեկությունների համաձայն, ձեր գորքերը մտադիր են առաջադիմել Նախիջևան, այն մատնելով հրո ու սրո: Թյուրիմացություններից ու նրանցից սերովող հնարավոր և անցանկալի արյունահոսությունից խուսափելու համար պետական կարևորության գործ է իմ ձեզ տեղյակ պահել մեր՝ Նախիջևանն ու նրա շրջակայքը գրակելու մասին⁵⁹:

Նախիջևանը Կարմիր բանակի տեղակայումից հետո:

Հոջորդ օրը գորավար Խալիլը իր հանձնարարականն է հեռագրել Ք.Կարաբեքիրին Էրզրում՝ չթողնել Նախիջևանը և այնտեղ տեղակայել մեկ դիվիզիա: Իսկ Բայազետի շտաբը հրաման է արձակել 3 գումարտակ, այն է՝ 500 ասկյար ու 4 թնդանոթ վերադարձնել նույն շրջանը: Թուրքական ամբողջ համակազմը իր զգեստներից հանել է տրեզներն և ուսադիրները՝ թողնելով միայն կարմիր աստղն ու կիսալուսինը գլխարկներին⁶⁰: Այդ պահին, ՀՀ բանակը կանգնած էր Նախիջևան քաղաքից 6,5 կմ հեռավորությամբ:

Պատերազմական հաջող ընթացքը ամրացրել են Ա.Ջամալյանի և Ա.Բաբայանի 1920թ. օգոստոսի 6-ին Բ.Լեգրանի հետ // -233 Թիֆլիսում սկսած հայ-խորհրդային բանակցությունները: Ի վերջո, օգոստոսի 10-ին կայացած համաձայնագրում հայկական կողմը ընդունել է երեք շրջանների վիճելի կարգավիճակն և նրանց բոլոր Կարմիր բանակով գրավված լինելու փաստը: Ի պատասխան, ՌՍՖՍՀ-ն ճանաչել է Հայաստանի անկախությունը, ՀՀ ստորաբաժանումները մնացին Շահթախտի և Խոքի դիրքերում⁶¹, իսկ Երևանը պահանջել է Ջուլֆա տանող երկաթուղին շահագործելու իրավունքը⁶²:

Նման իրավիճակում օգոստոսի 18-ին նորից իրեն զգացնել տվեց պարսկական գործոնը. արտգործնախարարի տեղակալ Ֆեհիմ Դովլեհը Գյուլիստանում հանդիպել է ՀՀ լիազոր դեսպանորդ Հ.Արղությանի հետ ու հայկական բանակից խնդրել զինադադար, որպեսզի արևմտյան Դաշնակիցները կարողանային քաղաքական լուծում կայացնել, կամ էլ զինված ույժերը հատուկ համաձայնագիր կնքելին «Նախիջևանի ժողովրդի» հետ: Չէ՞ որ Անդրկովկասի թաթարները նախկինում եղել են Պարսկաստանի հպատակ ու պատկանում էին իսլամի շիա ճյուղավորման: Հ.Արղությանը նրան տեղեկացրեց, որ ՀՀ-ն վերադարձնում է իր անքակտելի մասը: Հետևաբար, փոխնախարարը հայցեց ՀՀ ստորա-

⁵⁹ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.468, թ.33 և գ.581, թ.233: Մեջբերման անգլերեն թարգմանությունը տե՛ս R.Hovannisian, *The Republic of Armenia*, vol.III, p.318:

⁶⁰ V.Ünüvar, s.37-39, 41.

⁶¹ Խոք գյուղը գտնվում է Երևան - Նախիջևան ճանապարհին, Նախիջևան քաղաքից 28 կմ հյուսիս-արևմուտք:

⁶² Нагорный Карабах, с.574-575.

բաժանումներից՝ թեկուզ մի քանի օր սահմանափակվել պաշտպանական գործողություններով:

Ամսի 28-ին Մոսկվայում տեղի է ունեցել մեկ ուշագրավ հանդիպում ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողկոմ Գ.Չիչերինի, նրա քենալական պաշտոնակից Բեքիր Սամիի հետ: Առաջինն ընդունել է թուրքական բացատրությունը Շահթախտի զավթման առնչությամբ ու կրկնել անգլիացիներին բնորոշ հնարքը: Նա չէր պնդում հասանելի և ավելի հեշտ հսկվող Նախիջևանի վրա, սակայն խոսում էր հայկական Վանի և Բիթլիսի մասին: Գ.Չիչերինը պաշտպանում էր անկախ և իր կազմով միատարր ՀՀ-ին, ուստի առաջարկում էր բնակչության փոխանակում: Ժողկոմը նշում էր իր պահանջների բավականին նվազ լինելու մասին՝ Անտանտի համեմատ, իսկ Ռուսաստանի ռազմական օգնության բացակայությունը հանգեցնու էր Թուրքիայի պարտության: Ընդ որում, Վանի հիշատակումն այլ նպատակ չունէր, բացի մյուս կողմի նկատմամբ ճնշում գործադրելուց, քանի որ Բեքիրին հավաստիացրին՝ ռազմամթերքը ուղարկվում է անհապաղ՝ առանց Արևմտյան Հայաստանին առնչվող հստակ պատասխանի⁶³: //-234 Բեքիրը ընթրնում էր ռուսական թեկուզ նվազ պահանջների ավելի իրական լինելը, քան՝ արևմտյանը: Ուստի նա Անգորա է հեռագրել Ռուսաստանի՝ Հայաստանին ուժեղացնելու մասին, վերջինի խորհրդայնացնելու հեռանկարով: Ինքը խնդրել է շտապ այլ նահանգներից Բիթլիս ու Վան տեղափոխել ցեղեր ու մուհաջիրներ, որպեսզի հայկական նահանգներում ամրացվի այլազգիների տոկոսը:

Ի պատասխան, Բ.Կարաբեքիրը մտահոգվեց՝ նախքան Նախիջևանին այլընտրանք հանդիսացող Սարիղամիշի բարձրունքների ասկյարներով գրավումը ՀՀ-ում նոր կարգերի ընդունումը՝ Թուրքիային անհնար կդարձնի 1914թ. սահմանի հատումն ու նոր պատերազմի սանձազերցումը: Խալիլ փաշայի գնահատմամբ՝ խորհրդային իշխանությունը ՀՀ-ում պետք է կայանար օգոստոսի 21-25-ին⁶⁴: Ինչպես գիտենք, քենալականների երկյուղը չի հաստատվել: Լ.Շանթի պատվիրակությունը սեպտեմբերի 14-ին վերջապես վերադարձավ Երևան, որտեղ իր միտքն առաջ քաշեց՝ բոլշևիկներին առաջարկել փոխգիջում՝ Սևրի նկատմամբ, սակայն հեռացնել նրանց զինուժը Նախիջևանից ու Ջանգեզուրից: ՀՀ-ի դահլիճը մերժեց այդ միտքն ու մեծ վստահություն հայտնեց բանակի մարտունակության: Սեպտեմբերի 19-ին ՀՀ կառավարությունը հրավիրեց ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ.Լեգրանին Երևան, սակայն վերջինս ժամանեց մեկ ամիս ավելի ուշ:

⁶³ R.Hovannisian, *The Republic of Armenia, vol.IV Between Crescent and Sickle: Partition and Sovietization*. Berkeley & Los Angeles, 1996, p.161-162.

⁶⁴ Նույն, p.216:

1920թ. թուրք-հայկական պատերազմն ու Նախիջևանը:

Մ.Քենալի՝ սեպտեմբերի 20-ին արձակած հրամանով սկիզբ առավ չարաբաստիկ, ծանրագույն կորուստների պատճառ՝ թուրք-հայկական պատերազմը: Ռազմական գործողությունները սկսվեցին ամսի 22-ին: Սակայն Լ.Շանթի խումբը Բ.Լեգրանի հետ երևանյան սեղանի շուրջ բանակցելիս Սևրից չէր հրաժարվում հոկտեմբերի 13-ին անգամ: Հայկական կողմը անտեսում էր Սևրի պատերազմի պատճառ *casus belli* հանդիսանալու պարագան, այն էլ այնպիսի պատերազմի, որը հաղթելն անհնար էր ուժասպառ ՀՀ-ի հասարակության համար: Ավելին, հայկական կողմը սեղանին դրեց Արաքսի հովտում տարանցման վերաբերյալ կանխավ անընդունելի, անգլիացիների հետ համաձայնեցված պայմանները: Պահանջների ցուցակում էին Նախիջևանի //235 վերադարձը, թուրքական բանակի լիակատար դուրսմղումը, ՀՀ սահմանների ճանաչումը Տրապիզոնով և Երզրումով, ինչպես և տարանցիկ ռազմական բեռների կեսի փոխանցումը ՀՀ-ին: Հոկտեմբերի 24-ին՝ պատերազմի աղետալի պայմաններում, հայկական կողմը համաձայնվեց տարանցման ու խոսք բացեց 1914թ. սահմանի մասին:

Այնուհետև՝ 1920թ. հոկտեմբերի 28-ին Երևանում ստորագրվեցին երեք փաստաթուղթ, որոնք հիմք են ծառայել միասին ձևակերպված հաշտության պայմանագրի նախագծի համար: Հանրագումարային պայմանագրի հայտարարությամբ՝ ՌՍՖՍՀ-ն և Խորհրդային Ադրբեյջանը ճանաչում էին ՀՀ անսասան իրավունքը Նախիջևանի և Ջանգեզուրի նկատմամբ, այնտեղից դուրս էին բերում իրենց զորքերը ՀՀ-ի՝ Արցախից հրաժարվելու դիմաց: Բացի դրանից, Հայաստանի և Ադրբեյջանի միջև բոլոր ներկա սահմանային վեճերը կարգավորում են այս երկու կողմերը՝ Ռուսաստանի միջնորդությամբ, կամ հանրաքվեով⁶⁵: Նման պայմանավորվածությունը անհամատեղելի էր քենալական ծրագրերի հետ, ու թուրքական զորամասերը՝ տեղական հրոսակների հետ միասին, նոյեմբերի 12-17-ին գրոհեցին Նախիջևանում Գ.Շելկովնիկյանի 21-րդ ու 3-րդ գնդերի վրա: Առաջին հարձակումները հետ մղվեցին, բայց ավելի ուշ ՀՀ բանակը կորցրեց համարյա ամբողջ Շարուրն ու նահանջեց Գայլեդրունք: Նույն օրերին՝ նոյեմբերի 15-ին, Հ.Օհանջանյանի կառավարությունը անձնատուր եղավ՝ դեռևս հույսեր փայփայելով, թե Թուրքիան կպահպանի հավաք եւ անկախ Հայաստանը իր սահմանի վրա՝ մեծ ու ներքուստ վտանգավոր Ռուսաստանից մեկուսանալու համար:

Նոյեմբերի 30-ին Ալեքսանդրապոլում թուրքերը Ա.Խատիսյանին հանձնել են սահմանը պարունակող քարտեզ: Այժմ քենալականներն իրենց էին վերապահում Շարուր-Նախիջևանի վերահսկումը մինչև նրա տեղական ինքնակառավարման հաստատումը: Քարտեզին հետևեց Ք.

⁶⁵ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.12, թ.30; նաեւ R.Hovannisian, The Republic of Armenia, vol.IV, p.228-229:

Կարաբեքիրի ընդարձակ հուշագիրը՝ նվիրված թուրքական դերակատարությանը պատմության ու համաշխարհային քաղաքակրթության մեջ: Ինքը՝ 1920թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագիրը հողված 2-ով վերապահել էր հաստատել Շարուր-Շահթախտ-Նախիջևանի վարչակարգը հանրաքվեով և առանց Հայաստանի //-236 միջամտության: Մինչև հանրաքվեի անցկացումը ստեղծվում ու գործում էին տեղական իշխանությունները՝ Թուրքիայի պաշտպանության ներքո: Հող. 12-ով Անդրկովկասում մտցվում էր անմաքս տարանցում ու Թուրքիայի, Շարուր-Նախիջևանի և Պարսկաստանի միջև ճանապարհներով և երկաթուղով փոխադրումների ազատություն: Քեմալականները դառնում էին նրանց գլխավոր վերակացուն՝ մինչև որ ստորագրեն ընդհանուր համաձայնագիրը: Ըստ հող.16-ի՝ ՀՀ-ն պետք է ստանար նրանց համաձայնությունը՝ երկաթգծի վերականգման, հեռախոսից, հարևանների հետ սուրհանդակների ծառայությունից օգտվելու համար⁶⁶:

Այնուամենայնիվ, վերոնշյալից կես օր առաջ և իսկապես 1920թ. դեկտեմբերի 2-ին ՀՀ-ի և ՌՍՖՍՀ-ի միջև ստորագրվել էր մի համաձայնագիր, որով սոցիալիստական Հայաստանի Հանրապետության անվիճելի տարածք էին ճանաչվում Երևանի նահանգի բոլոր գավառները՝ Նախիջևանն ու Ձանգեզուրը ներառյալ:

Հանրագումարի բերելով՝ դժվար է չհամաձայնվել տվյալ ասպարեզի ռահվիրա, ամերիկյան պատմաբաններից առավել գիտակ ու հեղինակավոր մասնագետի եզրակացությանը, թե թուրքական նախագիծն ու հատկապես Ալեքսանդրապոլի պայմանագիրը «ցրել է հայկական պատվիրակության հույսի վերջին փշրանքն ու ցույց տվել, որ նրա հաշվարկները թուրքական ընդարձակման ու գերիշխանության վերաբերյալ բացարձակապես սխալ էին»⁶⁷: //-237

©

29 էջ

«Հայկազեան Հայագիտական Հանդես»: Պէյրուք, 2017, հատ.37, էջ 207-244:

⁶⁶ Ալեքսանդրապոլի պայմանագրի բնագիրը տե՛ս՝ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.12, ք.66-67; գ.602, ք.438-440: Լույս է տեսել՝ Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении. Сб.док., сост.А.Н.Мнацаканян. Ереван, Айнепрат, 1957, с.438-441; նաև՝ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923): Կազմ.Զ.Ս.Կիրակոսյան, Ռ.Գ.Սահակյան: Երևան, Հայաստան, 1972, էջ 683-687: Թուրքերեն բնագիրը՝ Atatürk'ün milli dis politikasi, I: 1919-1923 Millî mücadele döneminde ait 100 belge. Ankara, Kültür Bakanlığı, 1981, s.517-528: Այս տարբերակը անգլերենով ու մանրամասն հետազոտված տե՛ս՝ R. Hovannisian, The Republic of Armenia, vol.IV, p.394-396:

⁶⁷ Լույն, էջ 373: